

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 12-ի N 216-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ



ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
(2017-2021թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝ _____ /Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ/

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 216-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում

1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ	6
1.2 Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական և մշակութային հուշարձաններ.....	8
1.3 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ.	9
1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ.	10
1.5 Ձեռնարկություններ.....	11
1.6 Առողջապահական հաստատություններ.....	12
1.7 Քաղաքաշինություն և ճարտարապետություն.....	12
1.8 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն	14
1.9 Բնակվոնություն և համապիրություններ.....	20
1.10 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն.....	22
1.11 Գովազդ, առևտուր և սպասարկում.....	23
1.12 Կրթություն.....	25
1.13 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	26
1.14 Ֆիզկուլտուրա և սպորտ	27
1.15 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն.....	28

2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայությունները

2.1 Համայնքի տեսլականը	30
2.2 Համայնքի զարգացման ռազմավարությունը	31
2.3 Համայնքի զարգացման 2017-2021 թվականների գերակայությունները.....	31

3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ

3.1 Հանրապետական և մարզային ծրագրեր.....	32
--	----

3.2 Միջհամայնքային ծրագրեր.....	34
3.3 Այլ ծրագրեր և միջոցառումներ.....	34

4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վելուծում, գնահատում և կանխատեսում, համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր

4.1 Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը....	36
4.2 Համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր.....	42

5. Ոլորտային ծրագրեր

5.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն.....	43
5.2 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն.....	48
5.3 Բնակարկություն և համապիրություններ.....	53
5.4 Տրանսպորտ.....	55
5.5 Գովազդ, առևտուր և սպասարկում.....	56
5.6 Կրթություն.....	56
5.7 Մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ.....	59
5.8 Ֆիզկուլտուրա և սպորտ.....	63

6. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ

Հավելվածներ

Հավելված 1.	68
Հավելված 2.	69
Հավելված 3.	70
Հավելված 4.	71
Հավելված 5.	72
Հավելված 6.	73

Հավելված 7.		79
Հավելված 8.		80
Հավելված 9.		89
Հավելված 10.		93
Հավելված 11.		94

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ծիրակի մարզի Գյումրի համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է վեց բաժիններից՝

1. Համայնքի իրավիճակի գնահատում.
2. Համայնքի տեսլականը, ռազմավարությունը և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայությունները.
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ.
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վելուծում, գնահատում և կանխատեսում, համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր.
5. Ոլորտային ծրագրեր.
6. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ:

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել «Բալասանյան» դաշինքի նախընտրական ծրագիրը, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լուսմների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Համայնքի տարածքը կազմում է 4429 հեկտար:

Համայնքն ունի աշխարհագրական հարմար դիրք, որը ակոսվում է Չերքեզի, Զաջուռի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է՝ ծածկված լճագետային և հրաբխային շուրջ 350մ հզորության նստվածքներով:

Գյումրու օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը տափաստանային է, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Քաղաքը տարեկան ստանում է մոտ 2500 ժամ արեգակնային լույս և ջերմություն: Մեծ է հորդաբուխ աղբյուրների քանակը, որոնք միասին մեկ վայրկյանում տալիս են 1200 լիտր ջուր:

Համայնքի մոտով հոսում է Հայաստանի Հանրապետության ջրառատ գետերից մեկը՝ Ախուրյանը: Գյումրին գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Այստեղ 1840թ. հունիսի 20-ին, 1846թ. մարտի 22-ին 1926թ. հոկտեմբերի 29-ին, 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի են ունեցել աղետալի երկրաշարժեր՝ մարդկային մեծ զոհերով և նյութական կորուստներով:

Գյումրի համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5°C մինչև -12°C , հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը՝ 16°C և ցածր: Ձմեռը ցուրտ է, կայուն, և երկարատև ձյան ծածկույթը սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում:

Գարունը երկարատև է, ցուրտ: Յրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով և խոնավ՝ փոփոխական եղանակով: Աշունը սառն է: Առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարությունները սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին:

Շրջակայքը հարուստ է շինանյութերով՝ տուֆով, բազալտով, դիատոմիտով, կավով, սևահողային արգավանդ դաշտերով:

Գյումրին իր անվանումը վերցրել է Ախուրյան գետի Գումրիգետ վտակի անվանումից, որը հոսում է քաղաքից ոչ հեռու:

Այս տեղանքում մարդիկ բնակվել են սկսած մ.թ.ա. VI դարից: Այս մասին հիշատակել է հին հույն պատմիչ Քսենոփոնը:

Հայկական մատենագրության մեջ Կումայրին (Գյումրու հնագույն անվանումն է) առաջին անգամ հիշատակվում է 773-775թթ.՝ արաբական տիրակալության դեմ ապստամբության հետ կապված: Միջին դարերում Կումայրին արդեն խոշոր բնակավայր էր: 1804թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ (1804-1813թթ.) Կումայրին մտնում է Ռուսաստանի Կայսրության կազմի մեջ: 1837թ. քաղաքից ոչ հեռու հիմնադրվում է ռուսական ամրոց, նույն թվականին էլ Կումայրի է այցելում կայսր Նիկոլայ I-ը, և Կումայրին վերանվանվում է Ալեքսանդրապոլ՝ ի պատիվ կայսրուհի Ալեքսանդրայի:

1840թ. Ալեքսանդրապոլը պաշտոնապես դառնում է քաղաք, իսկ 1850թ. դառնում է Էրիվանի գավառի Ալեքսանդրապոլի շրջանի կենտրոն: Շուտով, լինելով սահմանային բերդ-քաղաք, Ալեքսանդրապոլը դարձավ առևտրի և արհեստների կարևոր կենտրոն, հայ մշակույթի խոշորագույն կենտրոն Անդրկովկասում:

1899թ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղային գծի կառուցումից հետո, որը 1906թ. ձգվեց մինչև Ջուղա և հետո դեպի Թավրիզ, Ալեքսանդրապոլը դարձավ կարևորագույն երկաթուղային հանգույցներից մեկը:

Դա շրջադարձային պահ էր քաղաքի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում: Թիֆլիսից և Բաքվից հետո Ալեքսանդրապոլը համարվում էր երրորդ ամենամեծ և ամենակարևոր առևտրային կենտրոն Կովկասում:

1924թ. Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինական, իսկ 1991թ. սկզբին՝ Կումայրի: 1991թ. սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հռչակումից հետո քաղաքին վերադարձվեց իր պատմական անվանումը՝ Գյումրի:

2013թ.-ին Գյումրին ճանաչվել է «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք», իսկ 2016թ.-ին՝ «ՀՀ երիտասարդական մայրաքաղաք»:

1.2 Զբոսաշրջային հեղափոխություն ներկայացնող պատմական և մշակութային հուշարձաններ

Պատմաճարտարապետական հուշարձաններ

- «Ալեքսանդրապոլ» բերդ
- Հյուսիսային բերդապահ ամրոց (Կարմիր աշտարակ)
- Հարավային բերդապահ ամրոց (Սև աշտարակ)
- «Մայր Հայաստան» հուշահամալիր
- «Պատվո բլուր»
- Գերմանացի ռազմագերիների գերեզմանոց

Ալեքսանդրապոլի գրական կյանքը

- Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը
- Հ. Շիրազի հուշաթանգարանը
- «Երգեր և վերքեր»-ի հրատարակությանը նվիրված հուշակոթող
- Մ. Արմենի հայրական տունը
- Ատրպետի ապրած տունը
- Խ. Դաշտենցի հայրական տունը

Ճարտարապետական հուշարձաններ

- Ճարտարապետ Գ. Աղաբաբյանի հայրական տունը
- Գարգալոյանների առանձնատունը
- Ճարտարապետ Ա. Թարխանյանի հայրական տունը
- Նախկին ռուսական բանակի սպայական ակումբը
- Կարանյան եղբայրների բնակելի առանձնատունը
- Յուզբաշյանների բնակելի համալիրը
- Նախկին օրիորդաց պրոգիմնագիայի շենքը
- Դրամբյան Ջավահիրի օժիտի շենքը
- Առևտրային ուսումնարանի շենքը

- «Պոլոզ Մուկուչ» գարեջրատունը
- Նախկին Խրիմյան դպրոցի շենքը
- Նախկին Սահականուշյան օրիորդաց դպրոցի շենքը
- Կոստանյանների և Տեր-Մարտիրոսյանների բաղնիքները
- Դրամբյանների բնակելի առանձնատունը
- Քեշիշյանների բնակելի առանձնատունը
- Եղիազարյանների բնակելի առանձնատունը («Ուստա Կարո» խաշարան)

1.3 Ժողովրդագրություն և սոցիալական կազմ

Համայնքի բնակչության թիվը՝ առկա – 114 200, այդ թվում՝

կանայք – 59 384

տղամարդիկ – 54 816

Բնակչության տարիքային կազմը՝

0-1 տարեկան – 1619

1-2 տարեկան - 1915

3-4 տարեկան - 1990

5-6 տարեկան - 2210

7-10 տարեկան - 3064

11-14 տարեկան - 4532

15-17 տարեկան - 6225

18-22 տարեկան - 7143

23-45 տարեկան - 27929

46-62 տարեկան - 30925

63 և ավելի 26648

Սոցիալական կազմը, այդ թվում՝

թոշակառուներ – 26 442

միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 697

երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 24

հայրենական պատերազմի մասնակիցներ – 49

հաշմանդամներ – 9960, որից՝ 0-5 տարեկան - 66, 6-15 տարեկան - 218, 16-18 տարեկան - 69

աշխատանք ունեցողներ – 29 052

գործազուրկներ – 11 197

ընտանիքների (ծխերի) թիվը – 31712

«Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ – 11 439

անօթևան ընտանիքներ - 2789

միայնակ մոր երեխա - 30

ամուսնալուծված անձերի երեխաներ - 1732

միայնակ չաշխատող թոշակառու - 651

Աղբյուրը՝ ՀՀ Շիրակի մարզային վիճակագրական վարչություն, Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժին, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժին, սոցիալական ծառայությունների Գյումրի-1 և Գյումրի-2 տարածքային բաժիններ՝ առ 01.10.2016 թվական:

1.4 Տեղական ինքնակառավարման մարմիններ Համայնքի կառավարում

Համայնքի ավագանու անդամների թիվը - 33

համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են 8 հայեցողական պաշտոն, կառուցվածքային ստորաբաժանումների 152 համայնքային ծառայող, առանձնացված ստորաբաժանումների 33 համայնքային ծառայող;

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը (*հավելված 1*):

Գյումրի համայնքում գործում են համայնքային ենթակայության թվով 58 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ 1393 աշխատատեղով: Այդ ՀՈԱԿ-ների անվանումները և աշխատակիցների թիվը կներկայացվի ըստ ոլորտների:

Գյումրի համայնքում գործում են համայնքային հինգ փակ բաժնետիրական ընկերություններ՝ «Բնակտնտեսություն» ՓԲԸ, «Տիմ-Շին» ՓԲԸ, «Արտ-նախագիծ» ՓԲԸ, «Բարեկարգ քաղաք» ՓԲԸ, «Հավերժ հիշատակ» ՓԲԸ:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ընթացքում օգտագործվում է համայնքի անհատակացման խորհրդանիշներ (*հավելված 2*):

ՏԻՄ-ի տարիների գործունեության ընթացքում ձևավորվել է քույր քաղաքների ցանց (*հավելված 3*):

Համայնքային ծառայությունն առավել որակյալ դարձնելու համար անհրաժեշտ է՝

- կազմակերպել ավագանու գործունեությունն առավել արդյունավետ՝ ապահովելով բազմակարծության և բացարձակ թափանցիկության աշխատանքային միջավայր,

- ավագանու նիստերի ընթացքում լսել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պետերի, ՀՈԱԿ-ների տնօրենների, քաղաքացիներին ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների ղեկավարների հաշվետվությունները,
- համայնքային աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ փոխանակման և փորձի փոխանակման ծրագրեր,
- թարմացնել համայնքապետարանի կայքը՝ այն դարձնելով ինտերակտիվ՝ բնակչության հետ կապը դարձնելով առավել արդյունավետ,
- ներդրած «Մեկ պատուհանի» սկզբունքի և «Մալբերի» համակարգի միջոցով աշխատակազմի աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ հասնել ավելի արագ և որակյալ համայնքային ծառայության մատուցմանը,
- բնակիչ-SԻՄ համագործակցության ընթացքում հերթերից և ժամանակի կորստից խուսափելու նպատակով առավել ընդլայնել էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը,
- սեփական ռեսուրսներով մատուցվող ծառայությունների մշակում և սպասարկում,
- ելնելով ավագանու նիստերի նորակառույց դաիլիճի հնարավորությունից՝ ապահովել բնակիչների մասնակցությունը իրենց հուզող հարցերի քննարկմանը:

1.5 Ճեռնարկություններ

Համայնքում գրանցված են թվով 88 արտադրական ձեռնարկություններ՝ 1156 աշխատատեղով:

Ըստ գործունեության բնագավառների՝

թեթևարդյունաբերական – 13

սննդամթերք արտադրող ձեռնարկություններ – 30

գոլացուցիչ ըմպելիք և հանքային ջրեր արտադրող ձեռնարկություններ – 4

գարեջրի արտադրություն - 1

մետաղյա իրերի և սարքաշինություն արտադրող ձեռնարկություններ – 18

կահույք, բետոնյա իրեր և քար արտադրող ձեռնարկություններ – 18

շերտավարագույր և ոսկերչական իրերի պատրաստում – 2

Գյումրու Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում գործում են 23 կազմակերպություններ:

Աղբյուրը՝ Գյումրու համայնքապետարանի տվյալների հավաքագրման հարցաթերթ՝ առ 01.07.2016 թվական:

Գործող որոշ փոքր ու միջին ձեռնարկություններում վերջին տարիներին կատարված ներդրումների շնորհիվ հնարավոր եղավ պահպանել աշխատատեղեր, բարելավել արտադրանքի որակն ու արտաքին տեսքը, բարձրացնել մրցունակությունը: Համայնքում նկատելի աճ կա առևտրի և բնակչությանը մատուցվող ծառայությունների մասով:

Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելուն, ինովացիոն տեխնոլոգիաները տնտեսության մեջ ներդնելուն մեծապես կարող է նպաստել Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիական կենտրոնը:
Համայնքում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրներն են՝

- *օտարերկրյա ներդրողների համար ցածր գրավչություն,*
- *նպաստավոր և խրախուսող օրենսդրական դաշտի կադարելագործման կարիք,*
- *թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում արտահանվող արտադրանքի փոքր ծավալ:*

Մրցունակ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար համայնքում նպատակահարմար է անցում կատարել ինովացիոն արտադրությանը և ինովացիոն բիզնեսին: Համայնքում հատկապես կարևոր է բարձր որակ ապահովող զբոսաշրջության ինդուստրիայի համալիր զարգացումը, ինովացիոն տեխնոլոգիաներով աշխատող փոքր և միջին ձեռնարկությունների կայացումը:
Նախատեսվում են նաև մասնավոր ընկերություններում մասնակցային ներդրումներ:

Համայնքապետարանի կողմից փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելու մեխանիզմները հետևյալն են՝

- *քույր քաղաքների հետ փոխադարձ փորձի փոխանակման և համատեղ բիզնես ծրագրերի իրագործմանն աջակցության ցուցաբերում,*
- *համայնքային տնտեսության բոլոր ոլորտներում ինովացիոն նախաձեռնությունների խրախուսում և աջակցություն,*
- *արտոնյալ պայմաններով տարածքների հատկացում:*

1.6 Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում են մարզային ենթակայության թվով 110 առողջապահական կազմակերպություններ՝ 2256 աշխատատեղով:
Հիվանդանոցային բժշկական կենտրոններ – 9-ը՝ 1018 աշխատատեղով,
արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություններ (պոլիկլինիկաներ) – 9-ը՝ 636 աշխատատեղով,
մասնագիտացված արտահիվանդանոցային բժշկական կենտրոններ – 8-ը՝ 221 աշխատատեղով,
ստոմատոլոգիական բժշկական օգնություն իրականացնող հաստատություններ – 41-ը՝ 226 աշխատատեղով,
դեղատներ – 43-ը՝ 155 աշխատատեղով:

Աղբյուրը՝ ՀՀ Շիրակի մարզի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝ առ 01.07.2016 թվական

1.7 Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Համայնքի վարչական տարածքը 4429,5 հա է, որից համայնքային սեփականություն հանդիսացող հողերն են՝ 3253,32 հա:
Ըստ նպատակային նշանակության՝

Գյուղատնտեսական – 413,58 հա, որից համայնքային սեփականություն – 413,58 հա,
բնակավայրերի – 2712,15 հա, որից համայնքային սեփականություն – 2185,5 հա,
արդյունաբերական և ընդերքօգտագործման – 366,39 հա, որից համայնքային սեփականություն – 355,85 հա,
էներգետիկայի, տրանսպորտի և կապի – 423,02 հա, որից համայնքային սեփականություն – 77,26 հա,
հատուկ պահպանման տարածքների – 256,69 հա, որից համայնքային սեփականություն – 0 հա,
անտառային – 150,84 հա, որից համայնքային սեփականություն – 146,0 հա,
ջրային – 12,72 հա, որից համայնքային սեփականություն – 11,00 հա:

Աղբյուրը՝ Գյումրու քաղաքապետի 12.08.2016 թվականի N 135-Ա որոշում

Գյումրի քաղաքը ձևավորվել է պատմականորեն և հարուստ է պատմամշակութային ժառանգությամբ:

Քաղաքի կենտրոնական մասը, ինչպես նաև Ախուրյանի ձորը՝ որպես բնական լանդշաֆտի պահպանման տարածք, ընդգրկված են «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի սահմաններում (հաստատված ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1980 թվականի օգոստոսի 4-ին):

Արգելոցում ընդգրկված են նաև XIX դարի սկզբում կառուցված ռազմական զինվորական բարձրաստիճան սպաների, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից գաղթած հայ ընտանիքների բնակելի թաղամասերը, քաղաքի ճարտարապետական կերպարը բնորոշող եկեղեցիները (Ամենափրկիչը, Ս.Աստվածածինը, Ս.Նշանը, ՍԲ.Գրիգոր (Գեղացունց ժամը), ռուսական մատուռը, զորակայանների տարածքներում գտնվող ուղղափառ երկու եկեղեցիները), ռուսական ժամատունը՝ «Պլպլան ժամ», Ձիթողցյանների, Դրափյանների, Ծաղիկյանների, Վեքիլյանների եկամտաբեր տները, բաղնիքները, գարեջրի գործարանը, առևտրական ուսումնարանը, օրհորդաց Օլգինյան գիմնազիան, Աղաբաբյանների, Մազմանյանների, Գարգալյանների և այլոց բազմաթիվ մենատները:

Արգելոցի անքակտելի մասն են կազմում նախապատերազմյան (մինչև 1941թ.) տարիներին կառուցված մի շարք ճարտարապետական բարձրարժեք շենքեր, այդ թվում՝ Տեքստիլ կոմբինատի բնակելի և արդյունաբերական համալիրները, ճարտարապետներ Մազմանյանի, Քոչարի, Քաջազնունու, Չիսլիևի, Բակի, Սարկիսովի նախագծով կառուցված բազմաթիվ շինություններ:

«Կումայրի» պատմական արգելոց-թանգարանը զբաղեցնում է շուրջ 1000 հա տարածք, ուր գտնվում է 1200 պատմամշակութային հուշարձան:

Պատմական հուշարձանները մեծ վնաս են կրել 1988թ.-ի երկրաշարժից և կարիք ունեն վերականգնման:

Անցած 4 տարում քաղաքում իրականացվել է մեծամասշտաբ բնակարանաշինություն, պետական աջակցությամբ կառուցվել են «Մուշ-2» և «Մուշ-2/2» թաղամասերը, սակայն մինչ այսօր անօթևանության և քաղաքը ժամանակավոր կացարաններից ազատելու խնդիրները համարվում են առաջնային:

Քաղաքում առկա են 100-ից ավելի վթարային բազմաբնակարան շենքեր, մշակութային օջախներ և հասարակական նշանակության այլ շենքեր, որոնք պահանջում են հրատապ լուծում:

Իրավիճակը տագնապալի է նաև քաղաքի գերեզմանատներում. սպառվել են հողային բոլոր ռեսուրսները, և անհրաժեշտ են նոր հողատարածքներ:

Հիմնախնդիրներ՝

- համայնքի գլխավոր հատակագծի դրույթների խախտումներ.
- համայնքի փողոցային ցանցի անբարեկարգ իրավիճակ.
- երկրաշարժից վթարված բազմաբնակարան շենքերի առկայություն.
- գերեզմանատների հողային ռեսուրսների անհրաժեշտություն.
- արտադրական տարածքների ոչ նպատակային օգտագործում.
- «Մուշ-2» նորակառույց թաղամասի սպասարկման ենթակառուցվածքների բացակայություն.
- բազմաբնակարան շենքերի բակերի անբարեկարգ վիճակ.
- համալիր ավտոտնակների և ավտոկայանատեղիների բացակայություն.
- սպասարկման օբյեկտների ոչ համաչափ տեղաբաշխում.
- զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն.
- պատմաճարտարապետական հուշարձանների անմխիթար վիճակ:

1.8 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է «Շիրակջրմուկոյուղի» ՓԲԸ-ի կողմից:

Ջրամատակարարման համար օգտագործվում և նախատեսվում է օգտագործել Վերին Ախուրյանի հանքավայրի և Գյումրու իջվածքի ստորգետնյա ջրերը:

Վերին Ախուրյան հանքավայրի (Ղազանչիի, Կրասարի, Արփա լճի, Վարդաղբյուրի տեղամասեր) պաշարները կազմում են 287.7 հազ. մ3/օր, Զույգաղբյուրի տեղամասինը՝ 45.5 հազ. մ3/օր:

Համայնքի իջվածքի արտեզյան ջրերը կազմում են 295.8 հազ.մ3/օր:

Արտեզյան ջրերի ջրաբաշխիչների ազդեցության գոտին չի գերազանցում 10 կմ-ը, իսկ Վերին Ախուրյանի հանքավայրինը՝ 40 կմ-ը:

Ներկայումս այս հաշված պաշարների միայն 50-52% է օգտագործվում:

Որպես տեխնիկական ջուր օգտագործվում և նախատեսվում է օգտագործել նաև Ախուրյան գետի և ջրամբարների ջրերը:

Այսպիսով, խմելու որակի ջրի պաշարներով ապահովվածությունը բարենպաստ է: Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի տեխնիկական վիճակը: Գյումրու հարավում գտնվող մաքրման կայանը երկրաշարժից հետո չի գործում:

Ներկայումս և մինչև 1988թ.-ի դեկտեմբերի ավերիչ երկրաշարժը Գյումրի համայնքը խմելու որակի ջուր է ստանում ջրամատակարարման չորս համակարգով՝ Ղազանչիի երկու ջրատարներով՝ 820լ/վրկ, Զույգաղբյուրի՝ 450լ/վրկ, Կրասարի արտեզյան հորերից՝ 150 200լ/վրկ, Վարդբաղի աղբյուրներից՝ 45լ/վրկ: Վերը նշված աղբյուրները, բացի Վարդբաղից, գտնվում են քաղաքից 40-45 կմ հեռավորության վրա՝ Աշոցքի տարածաշրջանում: Ընդհանուր քանակը մոտ 2700 լ/վրկ, որից 450 լ/վրկ տրվում է մարզի գյուղերին:

Համայնքի ջրամատակարարման համակարգի գործող օրվա կարգավորիչ ջրամբարներն են՝ Հովունի գյուղի մոտ՝ 233000մ³ տարողությամբ, հատակի նիշը՝ 1664.0մ, Մարմաշեն գյուղի մոտակայքում՝ 432500մ³, հատակի նիշը՝ 1610.0մ, Մայիսյան գյուղի մոտակայքում՝ 2310000մ³, հատակի նիշը՝ 1652.0մ, և Արևիկի ջրամբարները՝ 232 000մ³, հատակի նիշը՝ 1616.0մ: Ջրամբարների ընդհանուր ծավալը 40.0 հազ. մ³ է: Ներկայումս քաղաք մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարվում է յուրաքանչյուր ջրատարի համար առանձին-առանձին կառուցված քլորակայանների միջոցով:

Համայնքի ջրամատակարարման աշխատանքներին աջակցում է Գերմանական զարգացման բանկը (KFW), որի կողմից տրամադրված վարկային միջոցներով արդեն կառուցվել է ստորգետնյա բաշխիչ ցանցի մոտ 65% -ը, իսկ մնացածը կկատարվի առաջիկա 2-3 տարիների ընթացքում:

Համայնքի տարածքով հոսող գետակները՝ Գյումրին, Ղոր-Ղոբին, Չերքեզի ձորը, վեր են ածվել բաց վիճակում հոսող կոյուղու կոլեկտորի: Ներկայումս չի գործում կեղտաջրերի բիոլոգիական մաքրման կայանը՝ 70.0 հազ. մ³/օր հզորությամբ: Կայանի աշխատանքի ժամանակ կեղտաջրերի քանակի մոտ 55%-ն էր ենթարկվում մաքրման՝ կայանի հզորության չափով, մնացածը առանց մաքրման լցվում էր Ախուրյան գետը:

Երկրաշարժից հետո, երբ սկսվեց համայնքի հյուսիսային մասում Նոր Մարմաշեն բնակելի թաղամասի կառուցապատման աշխատանքները, զուգահեռաբար իրագործվեց նաև թաղամասի կոյուղացումը և կեղտաջրերի հեռացումը դեպի կոյուղու մաքրման կայան՝ երեք գլխավոր կոյուղիներով՝ 1000-1200 և 600 մմ տրամագծերով: Բացի այդ, տեղանքի ռելիեֆային պայմանները թույլ են տալիս ինքնահոս հեռացում:

Նշված կոյուղիները, անցնելով հին համայնքի տարածքներով, իրենց մեջ են առնում շրջապատի կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

Ջրային կառույցներ

Ջրային կառույցները նախագծային փաստաթղթերով ունեն բնապահպանական նշանակություն. նախատեսված են մեղմելու միկրոկլիման, ամբողջացնելու քաղաքի ճարտարապետական տեսքը և համարվում են քաղաքի այցեքարտը: Դրանցից են՝ Վարդանանց

հրապարակի շատրվանները, Մանուշյան փողոցում անմխիթար վիճակում գտնվող շատրվանը, թատերական հրապարակում, կայարանամերձ հրապարակում, Ամենափրկիչ եկեղեցու հետնամասում և Բագրատունյաց այգում գտնվող շատրվանները:

Գյումրու համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող 6 ջրային կառույց վերանորոգվել է, գործում են 4-ը:

Մնացած 2-ի՝ Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ և Մանուշյան փողոցի վերջնամասում գտնվող շատրվանների շահագործումը խիստ դժվարացել է տեխնիկական վիճակի անբավարարության պատճառով:

Հիմնախնդիրներ՝

- *ջրային կառույցների քայքայված և մաշված վիճակ.*
- *ջրավազաններից ջրի մեծ չափերի կորուստ.*
- *անսարք ջրային կառույցների առկայություն.*
- *գեյզերները գտնվում են սանիտարապես շարժված վիճակում և շարունակվում են աղտոտվել:*

Էներգամատակարարում

Գյումրի համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլցանցներ ընկերության կողմից: Գոյություն ունեցող ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 685 մվտ է:

Գյումրի համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Գազարոմ – Արմենիա» ընկերության կողմից «Գյումրի-1» և «Գյումրի-2» ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը 230 հազ.խմ ժամ է:

2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Գյումրիում գազաֆիկացվել է 37680 բնակարան, այդ թվում՝ 20187 բազմաբնակարան շենք և 17493 առանձնատուն:

Արտաքին լուսավորություն

2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Գյումրիում լուսավորվող փողոցների թիվը կազմել է 206, իսկ լուսավորության ցանցը՝ 128,6 կմ: Լուսավորվել է 25 բակ, 6700 հենասյան վրա տեղադրվել են լուսատուներ:

Հիմնախնդիրներ՝

- *արտաքին լուսավորության լուսակետերի անբավարար քանակ.*

- արտաքին լուսավորության ցանցի անբավարար տեխնիկական վիճակ.
- էներգաարար լամպերի օգտագործում:

Փողոցներ, վերգետնյա և ստորգետնյա անցումներ

Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է:

Կարևոր հանգամանք է ճանապարհների ճաքալցման աշխատանքների իրականացումը պոլիմերային և բիտումապոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես երկարացնում է ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի շահագործման ժամկետը:

Համայնքի փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 2,2 մլն քմ: 2017թ. ճանապարհաշինության և ասֆալտապատման բնագավառում կներդրվեն աշխատանքների իրականացման բովանդակությամբ նոր պայմանագրեր, որով կսահմանվեն նախատեսված աշխատանքների որակի նկատմամբ գործուն հսկողության մեխանիզմներ և երաշխիքներ:

Վերջին մի քանի տարիներին կտրուկ աճել է ինչպես Գյումրի համայնքում հաշվառված, այնպես էլ ամեն օր Գյումրիով անցնող տրանսպորտային միջոցների քանակը, որը հատկապես կենտրոնական փողոցներում բավական մեծ դժվարություններ և լարվածություն է առաջացնում հետիոտնի անվտանգ շարժի համար և առաջ է բերում տրանսպորտային խցանումներ: Այդ տեսանկյունից կարևորվում է ստորգետնյա և վերգետնյա անցումների վերանորոգումը:

Համայնքապետարանում հաշվառված է 6 անցում, որից երկուսը գտնվում են բավարար վիճակում, երկուսը կոսմետիկ վերանորոգման կարիք ունեն, իսկ մյուս երկուսում անհրաժեշտ են իրականացնել շինարարական աշխատանքներ՝ երեսպատման, հարդարման, ջրամեկուսացման և լուսավորության: Երկու ստորգետնյա անցումում վարձակալական հիմունքներով գործում են առևտրի և սպասարկման կետեր: Հնգամյա ժամկետում պետք է հիմնովին վերանորոգել և գործարկվել մնացած բոլոր գետնանցումները:

Վարձակալությունից զանձվող գումարները նախատեսվում են ուղղել անցումների հիմնանորոգմանը և լուսավորության ցանցի վերանորոգմանը: Աշխատանքներ են տարվում մյուս անցումները ևս հնարավորության դեպքում հանձնել վարձակալության:

Հիմնախնդիրներ՝

- համայնքի փողոցների անբարեկարգ վիճակ.
- համայնքի որոշ փողոցների երթևեկության համար ծանրաբեռնվածություն.
- սայլակների համար թեքահարթակների անբավարար քանակ.
- տրանսպորտային միջոցներով ծանրաբեռնված փողոցներում երթևեկության կանոնակարգման անհրաժեշտություն:

Աղբահանություն, սանիտարական մաքրում

Համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 650 հազ. քմ:

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպվում են քաղաքապետարանի աշխատակազմի կողմից: «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն հասարակական կազմակերպությունը 2016 թվականին իրականացրել է «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն որակյալ կոմունալ ծառայությունների Գյումրիում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է աղբահանության և լուսավորության ոլորտների մոնիթորինգ, բյուջետային հետազոտություն և սոցիալական քարտեզ (compass-center.org):

Աղբահանությունը կատարվում է 1634 բազմաբնակարան շենքերից և շուրջ 20000 մասնավոր տնատիրություններից: Համայնքի փողոցների, մայրերի, հրապարակների, եզրաքարերի երկարությամբ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են հիմնականում հավաքարարների՝ ձեռքով ավելելու միջոցով, որից հետո եզրաքարերի մոտ կուտակված աղբակույտերը բանվորները բարձրում են աղբատար մեքենա:

Համայնքի վարչական տարածքում տեղադրված է թվով 799 մեծ և 260 փոքր աղբաման:

Չնայած սանիտարական մաքրման և աղբահանության ուղղությամբ նկատելի են դրական փոփոխություններ, սակայն դեռևս շատ անելիքներ կան: Անհրաժեշտ է ձեռք բերել ավելի, բարձր տեխնիկա, աղբի հեռացման հատուկ մասնագիտացված ավտոմեքենաներ:

Հիմնախնդիրներ՝

- *շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ֆինանսական մաշվածություն և անբավարար քանակ.*
- *աղբամանների քանակի պակաս.*
- *որոշ տարածքների աղբամանների շրջակայքի հակասանիտարական վիճակ.*
- *համայնքի տարբեր հատվածներում շինարարական աղբի մեծ կուտակումների առկայություն և չնախատեսված վայրերում աղբանեցումներ.*
- *համայնքում կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման ձեռնարկությունների բացակայություն.*
- *շենքերի բակերում սանմաքրման աշխատանքների բացակայություն.*

Բնապահպանություն

2015 թվականին ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացվել է Գյումրի համայնքի էկոլոգաներկրաբանական առանձնահատկությունների բացահայտում և էկոլոգաներկրաքիմիական քարտեզի կազմում (Գյումրու համայնքապետարանի պաշտոնական կայք՝ gyumricity.am, ծրագրերի բաժին)։

- համայնքի տարածքի պեդոներկրաքիմիական հանույթ և քարտեզագրում,
- համայնքի տարածքի ֆոնային պարունակությունների որոշում,
- հողերում ծանր մետաղների պարունակությունների տարածաբաշխման առանձնահատկությունների բացահայտում,
- հողերում ծանր մետաղների երկրաքիմիական ասոցիացիաների որոշում,
- հողերում առաջնային աղտոտիչների և հիմնական աղտոտման աղբյուրների բացահայտում,
- համայնքի տարբեր ֆունցիոնալ գոտիների երկրաքիմիական առանձնահատկությունների բացահայտում,
- փոշու տարածաբաշխման առանձնահատկությունների գնահատում,
- մակերևութային ջրերում ծանր մետաղների պարունակության գնահատում՝ երկրաքիմիական և սանիտահիգիենիկ առումով,
- տարածքի շրջանացում՝ ըստ աղտոտման և էկոլոգիական ռիսկի տարբեր մակարդակների,
- բնակչության շրջանում ռիսկի խմբերի առանձնացում,
- վնասի նվազմանը ուղղված միջոցառումների մշակում։

Համայնքի ջրային ռեսուրսների պահպանման խնդիրը պրոբլեմային է։ Առավել անբարենպաստ է Ախուրյան գետի վիճակը։ Արդյունաբերական և կենցաղային ջրերը առանց մաքրվելու լցվում են գետը։ Դեռ 1989թ. տվյալներով գետի աղտոտվածությունը բազմաթիվ անգամ գերազանցում էր թույլատրելի սահմանային խտություն՝ փոքրացնելով նրա ինքնամաքման հատկությունները։ Այժմ ավելի անվերահսկելի է դարձել կեղտաջրերի հոսքը դեպի Ախուրյան գետը։

Համայնքի հարավում գոյություն ունեցող մաքրման կայանը իր հզորությամբ 60հազ. մ3/օր, դեռ մինչև երկրաշարժը ապահովում էր կեղտաջրերի 50%-ի մաքրումը, իսկ այժմ այն պարզապես չի գործում։

Այժմ գետը թափվող կեղտաջրերի քանակը (0.5 մ3/վրկ) պահանջում է նոսրացման համար 8 անգամ ավելի մեծ ջրի ծախս (4.0 մ3/վրկ), ինչը չի կարող ապահովել Ախուրյան գետի թույլատրելի մակարդակը, քանի որ, ըստ Ախուրիկի դիտակայանի տվյալների, Ախուրյան գետի 75% ապահովվածությամբ միջին օրական նվազագույն ծախսը կազմում է 2.66 մ3/վրկ։

Քաղաքի տարածքով հոսող Գյումրի, Ղոր-Ղորի, Չերքեզիձոր գետակները վեր են ածվել բաց վիճակում հոսող կոյուղու կոլեկտորների և ներծծվելով ավելի ներքին հորիզոնները՝ աղտոտում քաղաքի տարածքի տակ գտնվող արտեզյան ջրերի վերին հորիզոնները։

Ախուրյան գետի աղտոտվածությունը դարձել է պրոբլեմային և անհապաղ պահանջում է նոր մաքրման կայանի կառուցում։

Գյումրի համայնքի ջրահեռացման համակարգերը, այդ թվում «քյարիզները», քաղաքի կառուցապատման հետևանքով քայքայվել են, և ի հայտ են եկել բնականոն հոսքերի խափանման երևույթներ։ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ստեղծված

հանձնաժողովը կատարել է ուսումնասիրություններ: Անհրաժեշտ է ուսումնասիրությունների արդյունքում մշակել ծրագիր և իրականացնել համապատասխան միջոցառումներ:

2016 թվականի գույքագրման տվյալների համաձայն՝ Գյումրի համայնքի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 552 հա, որից փողոցների սիզամարգեր՝ 10,5 հա, զբոսայգիներ՝ 17,5 հա, պուրակներ՝ 4,8 հա, անտառ-պուրակներ՝ 77 հա, Ախուրյան գետի ափամերձ տարածք՝ 22 հա: Ծառերի ընդհանուր թիվը 55 հազարից ավելի է, ծաղկային մակերեսը՝ 4.2 հա, ծաղկասածիլների քանակությունը՝ մոտ 706 հազար հատ:

Հիմնախնդիրներ՝

- շրջակա բնական միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածություն.
- կանաչ տարածքների անբավարար քանակ.
- համայնքի տարածքում բնական ջրավազանների աղտոտվածություն.
- գեղականների ափամերձ և հարակից տարածքների վատ վիճակ:

1.9 Բնակարանային տնտեսություն և համատիրություններ

Համայնքի բազմաբնակարան շենքերի և բնակարանների թիվը – 830/ 20,452

բնակֆոնդի ընդհանուր և բնակելի մակերեսները 2,074482քմ, այդ թվում՝

համայնքային սեփականություն – 1, 141732քմ

մասնավոր (սեփականաշնորհված) – 932,750 քմ

բազմաբնակարան վթարային բնակելի շենքեր և բնակարաններ – 88

համայնքում առկա ժամանակավոր կացարաններ – 3147

Աղբյուրը՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համատիրությունների մոնիթորինգի բաժին՝ առ 01.07.2016 թվական:

Համայնքում գտնվող բազմաբնակարան շենքերի կառավարումը իրականացվում է թվով 20 համատիրությունների կողմից (հավելված 4):

Համեմատաբար լավ վիճակում են «Մուշ-2» և «Անի» թաղամասերի նորակառույց շենքերը: Լուրջ մտածելու տեղիք է տալիս նաև Գյումրի համայնքի բազմաբնակարան շենքերի ջրամատակարարումը, քանի որ շենքերի ընդհանուր օգտագործման ջրագծերը ամբողջովին քայքայված են:

Վատ վիճակում են գտնվում շենքերի տանիքները, առաջնահերթ վերանորոգման կարիք ունեն մոտ 100 բազմաբնակարան շենքերի տանիքներ, որի աշխատանքները համատիրությունները իրենց միջոցներով ի վիճակի չեն իրականացնելու, ուստի, ինչպես նախորդ

քառամյակում, այնպես էլ առաջիկա հնգամյակում, համայնքապետարանի կողմից անհրաժեշտ է այդ վերանորոգման աշխատանքներին աջակցելու ծրագիր:

Բարեկարգման կարիք ունեն բակային տարածքները. կա խաղահրապարակներ կառուցելու կարիք: Կանոնակարգված և համաձայնեցված չեն համատիրությունների և կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների փոխհարաբերությունները: «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի կողմից «Իրազեկ քաղաքացին համատեր է-2» ծրագրի շրջանակներում հետազոտություններ են իրականացվել Գյումրիում համատիրությունների կառավարման արդյունավետության վերաբերյալ (compass-center.org): Համայնքում լուրջ խնդիր է տնակային ավանների գոյությունը: 2013-2016 թվականներին թվով 96 տնակային ավանում կատարվել է ժամանակավոր կացարանների ակնադիտական գույքագրում, որի արդյունքներով գրանցվել է 3147 ժամանակավոր կացարան, որտեղ ապրում է 2747 ընտանիք: Վերը նշված ժամանակահատվածում ապամոնտաժվել է 1200 ժամանակավոր կացարան:

Ժամանակավոր կացարաններում ապրող բնակիչների բնակարանային խնդիրները լուծելուն աջակցելու նպատակով հիմնադրվել է «Գյումրին առանց տնակների» հիմնադրամը:

«Առդա» բարեգործական հիմնադրամի հետ իրականացվում է սոցիալական բնակարանների կառուցման ծրագիր:

Իրականացվել է քարաշեն և քաղաքաշինական նորմերին համապատասխանող 70 տնակների անվճար սեփականաշնորհում, որը լինելու է շարունակական:

Անօթևանության խնդրի լուծմանն է միտված նաև «Միասին կարող ենք Գյումրին օր առաջ ազատել վագոն տնակներից» ծրագիրը, որը իրականացվում է «Շիրակ կենտրոն» ՀԿ կողմից (shirakcentre.am):

Հիմնախնդիրներ՝

- *բազմաբնակարան շենքերի տանիքների անմխիթար վիճակ.*
- *մաշված և վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն.*
- *բակային տարածքների անբարեկարգ վիճակ.*
- *խաղահրապարակների բացակայություն.*
- *համատիրությունների արդյունավետ կառավարման և ֆինանսական պլանավորման ոչ բավարար մակարդակ.*
- *համատիրությունների ոչ թափանցիկ աշխատանք.*
- *համատիրությունների ռեսուրսների սահմանափակություն.*
- *քաղաքացիների մոտ համատիրությունների գործունեության վստահության պակաս.*
- *համատիրությունների գործունեության կարգավորման և կառավարման փորձի փոխանակման կարիք:*

1.10 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Գյումրի համայնքն ու նրան հարող տարածքները գտնվում են տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Գյումրիով է անցնում Վրաստանի, Ռուսաստանի (Երևան-Գյումրի-Վանաձոր-Թբիլիսի-Բաթումի-Փոթի, նաև դեպի Մոսկվա) և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները: Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագծով նախատեսված է հեռավոր ապագայում (քաղաքում տարածքային մեծ պահանջարկի դեպքում) երկաթուղին դուրս հանել քաղաքի տարածքից և այն անցկացնել քաղաքի արևելյան մասով: Գյումրին ունի շահագործվող տեխնիկական բավարար մակարդակ և թռիչքների մեծացման հնարավորություն ունեցող միջազգային նշանակության օդանավակայան: Զարգացած է նաև ավտոմոբիլային ճանապարհների ցանցը: Գյումրու միջով անցնում է Մայիսյան-Բավրա-Վրաստան, Գյումրի-Կարս, Գյումրի-Վանաձոր-Իջևան-Աղբերջան սահմանների միջպետական նշանակության ավտոճանապարհները: Համայնքի արևմտյան հատվածներով անցնում են Երևան-Արմավիր-Անի-Պեմզա-Գյումրի, Գյումրի-Ամասիա-Պաղակն հանրապետական նշանակության ճանապարհները: Համայնքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

1988թ. երկրաշարժից հետո նախագծվեց քաղաքի արևելյան շրջանցիկ ճանապարհը, իսկ կառուցվեց միայն նրա 5.4 կմ հատվածը, որը ձգվում է Ախուրյանից մինչև Ազատան տանող ճանապարհը: Իսկ Ախուրյանի ճանապարհից մինչև Մայիսյան տանող ճանապարհատվածի միայն հողային պաստառն է մասամբ կառուցված:

Անվիճելի է, որ համայնքին անհրաժեշտ է շրջանցող ճանապարհ, որը մաս է կազմում «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհի: Անհրաժեշտ է պետական աջակցությամբ ավարտին հասցնել շրջանցիկ ճանապարհի կառուցումը՝ համայնքից հանելով ծանր բեռնատար ավտոմեքենաների հոսքը, որը փողոցների քանդման պատճառներից մեկն է: Այդ շրջանցիկը լինելու է Հյուսիս-Հարավի մաս:

Գյումրի համայնքի շրջանցիկ ճանապարհի երկարությունը կազմում է 15.0 կմ, այն սկսվելու է օդանավակայանի և Գյումրի-Երևան Մ-1 միջպետական ավտոճանապարհի հատման խաչմերուկից, համայնքը շրջանցելու է հյուսիսային մասում: Ծրագիրը ֆինանսավորվելու է Եվրոպական ներդրումային բանկի կողմից: Ներկա դրությամբ իրականացվում են նախագծային աշխատանքներ: Տրանսպորտային կապի տեսանկյունից ներկայումս համայնքի հիմնական խնդիրը համայնքով անցնող երկաթուղագիծն է, որը հյուսիսից-հարավ այն բաժանում է երկու մասի, որոնք միմյանց հետ կապվում են միայն երկու գծանցով՝ մեկը տարբեր մակարդակներում (Ախուրյան խճուղու մոտքը համայնք) և մյուսը միևնույն մակարդակում (Սպիտակ տանող ճանապարհի վրա): Դա է պատճառը, որ համայնք մուտք գործող այդ ուղիները և նրանց շարունակությունը կազմող համայնքային փողոցները մյուսների համեմատությամբ առավել ծանրաբեռնված են:

Համայնքի համար շատ կարևոր է նաև Երևանյան խճուղու և Լիսինյան փողոցի հատման վայրում տրանսպորտային հանգույցի կառուցումը, որը Մսի կոմբինատի թաղամասը կապելու է Երևանյան խճուղու հետ:

Համայնքի ուղևորատար հիմնական տրանսպորտի դերը ստանձնել են երթուղային միկրոավտոբուսները և ավտոբուսները, որոնց քանակը մարդատար տրանսպորտի հոսքում կազմում է 80-85 % միկրոավտոբուսների համար և 10-15 % ավտոբուսների համար:

Համայնքում գրանցված է 17.837 անձնական և 998 արտադրական ձեռնարկությունների ավտոմոբիլներ:

Համայնքում գործում են թվով 11 միկրոավտոբուսային և 2 ավտոբուսային երթուղիներ, որոնք համալրված են տարբեր մակնիշների շարժակազմերով: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների՝ սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 2 մասնավոր կազմակերպություններ:

Ավտոկայանատեղեր

Համայնքում տրանսպորտային միջոցների կայանատեղերի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ անհրաժեշտ են նոր կայանատեղեր ստեղծել Երևանյան խճուղի, Տերյան, Մուսայելյան (49-րդ), Մ.Գորկի, Տիգրան Մեծ, Սևյան, Խ.Հայրիկ, Թբիլիսյան խճուղի, Վ.Սարգսյան, Գ.Նժդեհ, Շիրակացի, Պ.Սևակ, Շահումյան և Սայաթ-Նովա փողոցներում:

Համայնքում առկա են 15 երթակարգավորական կետեր, որոնց միջոցով կարգավորվում է ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների աշխատանքները:

Հիմնախնդիրներ՝

- *համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման ցածր մակարդակը.*
- *հասարակական տրանսպորտի որոշ կանգառների անբարեկարգ վիճակ.*
- *երթուղիները սպասարկող կազմակերպությունների պատասխանատվության ցածր մակարդակ.*
- *երթակարգավորական կետերի թվի պակաս.*
- *ներհամայնքային ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցի վերանայման կարիք:*

1.11 Գովազդ, առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների

ընդհանուր թիվը կազմում է 578, այդ թվում՝

հասարակական սննդի խանութներ - 338

առևտրի տաղավարներ – 130

բենզինի լցակայաններ – 23

գազի լիցքավորման կետեր – 22

հանրային սննդի օբյեկտներ – 54

խաղատներ, զվարճալի, շահումներով խաղերի օբյեկտներ – 9

գյուղատնտեսական արտադրանքի շուկա – 2

Գյումրի համայնքում անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտները, իսկ կենտրոնական փողոցներին հարող տարածքները և մայթերը գերհագեցած են կրպակներով ու տաղավարներով, որոնցից շատերն արդեն իսկ ծառայում են փողոցային առևտուր իրականացնողների համար որպես պահեստներ: Ինչպես այդ, այնպես էլ պարենային, ոչ պարենային ապրանքների և գյուղմթերքների բացօթյա առևտուրը ենթակա է կանոնակարգման:

Գովազդը համարվում է ճարտարապետական միջավայրի ձևավորման հիմնական տարրերից մեկը: Համայնքում զբոսաշրջության զարգացման և հյուրերին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրման համար անհրաժեշտ են հյուրանոցների, համայնքի հիմնական մշակութային օջախների, հասարակական սննդի կետերի գտնվելու վայրերի վերաբերյալ խորհրդանշող վահանակներ: Հարկավոր է համայնքի մուտքերը խորհրդանշող վահանակների թարմացում: Գյումրու համայնքի տարածքում 2016թ. հոկտեմբերի 1- ի դրությամբ տեղադրված են 860 արտաքին գովազդային նյութեր՝ 90 գովազդային վահանակների և 45 հենասյուների վրա: Համայնքում գործունեություն են ծավալում արտաքին գովազդի ոլորտում «Հին թաղ» ՍՊԸ, «Իմիջ ՄԳ» ՍՊԸ, «ԷյԹիԷլ Սերվիսիս» ՍՊԸ, «Իմիջ Մեդիա» ՍՊԸ, «Սիլ Կոնցեռն» ՍՊԸ և «Արաքս» ՍՊԸ կազմակերպությունները: Գովազդի ոլորտը համայնքում կարգավորվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ ավագանին սահմանել է մեկ քմ- ի համար հետևյալ գովազդային սակագները՝

- ա) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,
- բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 4000 (չորս հազար) դրամ,
- գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ,
- դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 1050 (մեկ հազար հիսուն) դրամ:

Հիմնախնդիրներ՝

- *չկանոնակարգված բացօթյա առևտուր.*
- *համայնքում գործող գյուղմթերքների շուկաների անբարեկարգ վիճակ և թերբեռնվածություն.*
- *համայնքի փողոցներում տեղակայված կրպակների (տաղավարների) ոչ հրապուրիչ և անբարեկարգ վիճակ.*
- *գովազդային վահանակների անբավարար քանակ և որակ.*
- *տեղեկատվական սարքավորումների բացակայություն:*

1.12 Կրթություն

Համայնքում գործում են կրթական հաստատություններ, որից՝
ԲՈՒՀ-եր - 10-ը՝ 1674(գյումրեցի) ուսանող, 842 աշխատատեղ,
քոլեջներ - 4-ը՝ 1055 սովորող, 218 աշխատատեղ,
ուսումնարաններ - 3-ը՝ 716 սովորող, 152 աշխատատեղ,
վարժարաններ - 4-ը՝ 1650 աշակերտ, 227 աշխատատեղ,
ավագ դպրոց - 7-ը՝ 1703 աշակերտ, 297 աշխատատեղ,
միջնակարգ դպրոցներ - 4-ը՝ 1210 աշակերտ, 203 աշխատատեղ,
հիմնական դպրոցներ - 24-ը՝ 9930 աշակերտ, 1410 աշխատատեղ,
հատուկ դպրոցներ - 1-ը՝ 55 աշակերտ, 58 աշխատատեղ:

Վերը նշված հաստատությունները հանդիսանում են հանրապետական և մարզային ենթակայության կառույցներ:

Համայնքում գործում է համայնքային ենթակայության 24 մանկապարտեզ, որից 3-ը գործում է տնակային պայմաններում: «Արևիկ» մանկապարտեզի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների կատարումով:

Մանկապարտեզ հաճախում են 2400 երեխա: Աշխատում են 532 աշխատակից, որից մանկավարժներ են 241-ը (հավելված 5):
2013-2016 թվականներին իրականացվել են՝

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության կողմից Հայաստանյան Առաքելության «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի միջոցով «Հուսո առաքասո» նախադպրոցական ուսումնական հաստատությունում ջերմամեկուսացման և շենքի երեսապատման աշխատանքներ,

Հայ-ամերիկյան «Ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդ» հիմնադրամի «Բարեկեցիկ մանկություն» ծրագրի կողմից «Էյլիթիա» նախադպրոցական ուսումնական հաստատության վթարված մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ,

«Լիանա» և «Անի պարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություններում «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից խոհանոցի, խմբասենյակների հիմնանորոգման և կահավորման աշխատանքներ:

«Արտաքին հարաբերությունների աջակցության հիմնադրամ»-ի կողմից իրականացվում է «Ժպիտ» նախադպրոցական ուսումնական հաստատության մասնաշենքի հիմնանորոգում, որը ավարտին կհասցվի մինչև 2017 թվականը:

«Կանաչ տեխնոլոգիաների Հայկական կենտրոն» հիմնադրամի կողմից կառուցվել է արևային տաք ջրամատակարարման ու ֆոտովոլտային պանելներով իրականացվող անխափան էլեկտրասնուցման աղբյուր:

Մանկապարտեզներից 15-ը ունեն ջեռուցման համակարգ, 8-ը՝ ջեռուցվում են վառարաններով:

Մանկապարտեզները սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին մատչելի դարձնելու նպատակով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցով փոխանցվել են 40 խիստ անապահով ընտանիքների երեխաների ծնողական վարձավճարները:

«Առդա» բարեգործական կազմակերպության հովանավորությամբ 25 սոցիալապես անապահով երեխաներ անվճար հիմունքներով հաճախում են «Լուսաստղիկ» մանկապարտեզ:

Ավագանու 2014 թվականի N 33-Ա և 2016 թվականի N 4-Ա որոշումներով հաստատվել է Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաներին անվճար ընգրկելու և ծնողական վճարների սահմանված չափի նկատմամբ զեղչեր կիրառելու կարգը:

Ավագանու 2016 թվականի N 55-Ն որոշմամբ հաստատվել է նախադպրոցական ուսումնական հաստատություններ երեխաների հաճախումների (բացակայությունների) վերահաշվարկի կարգ:

Հիմնախնդիրներ՝

- *տնակային պայմաններում գործող մանկապարտեզների առկայություն.*
- *համայնքային որոշ մանկապարտեզների շենքերի մաշվածության բարձր աստիճան.*
- *գույքի մաշվածություն.*
- *որոշ մանկապարտեզների ջեռուցման համակարգերի բացակայություն.*
- *մանկապարտեզների բակերի բարեկարգման և խաղահրապարակների թարմացման կարիք.*
- *ծնողական վարձավճարների մուծման դժվարություն.*
- *նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակների անհամապատասխանությունը ԿԳՆ-ի կողմից հաստատված օրինակել հաստիքացուցակի հետ:*

1.13 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Համայնքում գործում է 7 գրադարան: 2016թ.-ին համայնքապետարանի գրադարաններում առկա գրքերի քանակը կազմում է 148հազ. կտոր: Ընթերցողների թիվը ընթացիկ տարվա 3 եռամսյակում կազմել է 48821 մարդ (հավելված 6):

Համայնքում գործում է 7 թանգարան, որոնցից 4 –ը՝ համայնքապետարանի ենթակայության տակ՝ Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարան, Ավ.Իսահակյանի տուն-թանգարան, Մ.Մկրտչյանի թանգարան, Ասլամազյան քույրերի պատկերասրահ: Համայնքի թանգարանային հավաքածուներում 2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդգրկված է 4520 ցուցանմուշ:

Համայնքում գործում է երաժշտական և արվեստի 7 դպրոց:

Համայնքապետարանի ենթակայության տակ գործում է երաժշտական 6 դպրոց՝ 1310 աշակերտով: Այդ դպրոցներն իրականացնում են արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն: Համայնքի տարածքում գործում է «Զբոսայգիներ և պուրակներ» ՀՈԱԿ՝ 5 աշխատակցով:

Համայնքի ենթակայության տակ գործում է 1 գեղարվեստի դպրոց՝ 60 աշակերտով, 1 պարարվեստի դպրոց՝ 62 աշակերտով, Պիոներ պալատ՝ 408 սանով, «Քրեյզի» պարային համույթ՝ 50 սանով, տիկնիկային թատրոն՝ 40 աշխատակցով: Տարեկան տիկնիկային թատրոն այցելում են մոտ 2800 երեխա:

Գյումրիում 17-30 տարեկան երիտասարդները կազմում են քաղաքի բնակչության մոտ 20%-ը: Աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մի մասը ստիպված բռնում է արտագաղթի ճանապարհը և ինքնահաստատվում օտար երկրներում:

Երիտասարդների համար աշխատատեղեր ստեղծելու և ժամանցային հետաքրքիր միջոցառումների կազմակերպման համար համայնքապետարանը կառուցել և շահագործման է հանձնել Երիտասարդական պալատը:

Հիմնախնդիրներ՝

- ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ.
- մշակութային շենքերի մաշվածություն.
- ցուցասրահներում և ֆոնդապահոցներում ջերմային ռեժիմի պահպանման դժվարություն.
- թանգարանային նմուշների անվտանգության համակարգի արդիականացման կարիք.
- մշակութային հաստատությունների ջեռուցման համակարգերի ներդրման կարիք.
- երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն.
- երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ:

1.14 Ֆիզկուլտուրա և սպորտ

Գյումրի համայնքում գործում են համայնքապետարանի ենթակայության 15 մարզադպրոց, որտեղ աշխատում են 211 մարզիչ-մանկավարժներ, որոնցից 18-ը ՀՀ վաստակավոր մարզիչներ են:

Մարզադպրոցներում մարզվում է շուրջ 2500 մարզիկ: (հավելված 7):

Քանի որ Գյումրու մարզական տնտեսությունը գտնվում էր շատ անմխիթար վիճակում, անցած տարիների ընթացքում, հատկապես վերջին 4 տարիների ընթացքում, մարզադպրոցներում կատարվել են մի շարք նորոգման աշխատանքներ: Չունենալով բավարար մարզական տնտեսություն՝ գյումրեցի մարզիկները բարձրակարգ մարզիչների շնորհիվ անցած 4 տարիների ընթացքում ունեցան բացառիկ հաջողություններ՝ տարբեր տարիքային խմբերում՝

- պատանիների օլիմպիական խաղեր 2014 թվականին՝ 1 չեմպիոն, 1 բրոնզ,
- 2016 թվականի 31-րդ ամառային օլիմպիական խաղեր՝ 1 չեմպիոն, 1 արծաթ,
- Աշխարհի առաջնություններ 2013-2016թթ. 6 ոսկի, 3 արծաթ, 17 բրոնզե մեդալ,
- Եվրոպայի առաջնություններ՝ 18 ոսկի, 21 արծաթ և 24 բրոնզ:

Հիմնախնդիրներ՝

- մարզադպրոցների շենքերի վերանորոգման կարիք.
- մարզագույքի կարիք.
- միջազգային մրցումներ կազմակերպելու համար մրցումային դահլիճի բացակայություն.
- մարզադպրոցների համար ջեռուցման համակարգերի կարիք.
- ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

1.15 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում և SWOT (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Աղյուսակ 1.15.1

Ուժեղ	Թույլ
• ՀՀ երկրորդ խոշոր քաղաք • Բնակլիմայական զուլ պայմաններ • Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն • Համայնքի գազաֆիկացվածության բարձր աստիճան • Հեռախոսակապի և հեռուստաընկերությունների առկայություն • Օդանավակայանի և երկաթգծի առկայություն • Ոլորտային ենթակառուցվածքների առկայություն • Տեխնիկական բավարար ապահովվածություն ունեցող առողջապահական կառույցների առկայություն • Թեթև արդյունաբերության զարգացման համար ռեսուրսների առկայություն • Շինարարության ոլորտի զարգացման համար ռեսուրսների առկայություն • Ժամանակակից առևտրի և սպասարկման օբյեկտների առկայություն • Տուրիզմի զարգացման համար նպաստավոր պայմաններ • Համայնքային իշխանության պատրաստակամ ներդրողների համար	• Բնակլիմայական ցուրտ պայմաններ • Քաղաքի բրենդավորման բացակայություն • Արտագաղթի բարձր մակարդակ • Տնակային պայմաններում ապրող ընտանիքների մեծ թիվ • Խմելու ջրի և ջրահեռացման համակարգերի վերանորոգման անհրաժեշտություն • Հեղեղատարների և ջրահեռացման համակարգի վատ վիճակ • Անբարեկարգ փողոցների և բակերի առկայություն • Համայնքում կիսակառույցների առկայություն • Վթարային շենքերի առկայություն և տարածքի սեյսմիկ անկայունություն • Հեծանվաուղիների բացակայություն • Սակավ կանաչապատ տարածքներ • Քաղաքում փոշոտվածության բարձր մակարդակ • Սահմանափակ թվով բնապահպանական միջոցառումներ • Համայնքային ենթակառուցվածքների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն

- նպաստավոր պայմաններ • Անշարժ գույքի ցածր գներ • Տեղեկատվական տեխնոլոգիական կենտրոնի առկայություն • Նախադարձական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների առկայություն • Մշակութային կենտրոնների առկայություն և հարուստ պատմամշակութային ժառանգություն • Մարզական կառույցների առկայություն և գյումրեցի մարզիկների միջազգային նվաճումներ • Մշակված տեղական երիտասարդական քաղաքականության փաստաթղթերի առկայություն • Երիտասարդական կառույցների ակտիվ գործունեություն • Էժան աշխատուժի առկայություն • Աշխատուժի ավելցուկ • «Գյումրին առանց տնակների» հիմնադրամ • Զարգացող քաղաքացիական հասարակություն • Միակ տարածաշրջանային ուղեղային կենտրոնի առկայությունը քաղաքում	• Ժամանակավոր տնակներում հակահրդեհային անվտանգության պայմանների ապահովման բացակայություն • Բնական ռեսուրսների սակավություն • Սննդի մատուցման ոլորտում հակասանիտարական պայմանների առկայություն • Ծառայությունների մատուցման մշակույթի ոչ բավարար մակարդակ • Գործարար-ակտիվ երիտասարդներ թույլ կապ • Գործազրկության բարձր մակարդակ • Բնակչության վարկունակության անկում • Ներքաղաքային տրանսպորտի անկանոն աշխատանք • Ժամանցի սահմանափակ հնարավորություն հատկապես երեկոյան ժամերին • Ֆինանսական այլընտարանքային միջոցների բացակայություն
Հնարավորություն	Սպառնալիք
• ՀՀ Շիրակի մարզի մարզկենտրոն • Համայնքի աշխարհագրական դիրքը՝ Երևանի և Վրաստանի հետ կապված է միջպետական ճանապարհներով • Սահմանամերձ աշխարհագրական դիրք • Միջպետական ճանապարհահատված • Քաղաքի նկատմամբ ձևավորված դրական իմիջ • Միջազգային համագործակցության ցանցի առկայություն • Ռուսական ռազմաբազայի առկայություն • Տրանսֆերտների մեծ ծավալ • «Հին քաղաք» կոլորիտի վերականգնում • Սթարթափ ծրագրեր • Սպորտի և մշակույթի մայրաքաղաք • Թեթև արդյունաբերության կենտրոն • Զբոսաշրջության զարգացում (համապատասխան կառույցներ, ցուցանակներ) • Սփյուռքի կապիտալի առկայություն և ներգրավում	• Աղքատության բարձր մակարդակ • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք • Սոցիալ-տնտեսական անորոշություն • Սոցիալ-տնտեսական պաշտպանության անկատար համակարգ • Արտաքին աշխարհի անիրազեկվածություն (զբոսաշրջիկների պակաս) • Քաղաքի զարգացման հեռանկարի նկատմամբ բնակիչների անվստահության պակաս • Շրջակա միջավայրի նկատմամբ անտարբերություն • Տարածքի սեյսմիկ անկայունություն • Թուրքիայի սահմանին մերձավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն

• Նորարար գաղափարների մրցույթներ • «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ»-ի վարկային և դրամաշնորհային ծրագրի առկայություն • Քույր քաղաքների հետ փոխհամագործակցության հուշագրեր և ծրագրեր • Տարբեր միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների հետ իրականացրած ծրագրերի փորձի և համագործակցության ապահովման փոխադարձ պատրաստակամության առկայություն	
---	--

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Համայնքի տեսլականը

Գյումրի համայնքի տեսլականը (հեռահար նպատակը) համայնքի կայուն զարգացումն է, որին համայնքը ձգտում է հասնել 5 տարի հետո:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականը հետևյալն է՝

Գյումրի քաղաքը իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ և ուրույն ճարտարապետական տեսքով՝ ձևավորված նոր որակի քաղաքային միջավայրով, դարձել է առավել գրավիչ բնակիչների, հյուրերի և զբոսաշրջիկների համար:

Համայնքում կրթական, մշակութային և մարզական հաստատությունները շահառու խավերի համար դարձել են առավել մատչելի և որակյալ, երիտասարդության ժամանցի կազմակերպման համար ստեղծվել են հարմար պայմաններ:

Համայնքի բնակիչներն ունեն բարելավված կենցաղային և բնակարանային պայմաններ:

Համայնքում զարգացած են փոքր և միջին արտադրական ձեռնարկությունները, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը:

Համայնքում Տեղական ինքնակառավարման մարմինների կառավարումը բաց է ու թափանցիկ, բնակիչները մասնակից են ՏԻՄ բոլոր օղակների որոշումների կայացմանը:

2.2 Համայնքի զարգացման ռազմավարությունը

Համայնքի իրավիճակի վերլուծության համար օգտագործվել է SWOT (ՈԻԹՀՍ) վերլուծությունը, որի արդյունքում ընտրվել է համայնքի հնգամյա զարգացման հետևյալ ռազմավարությունը՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զբոսաշրջության զարգացման կենտրոն՝ մաքուր, բարեկարգ և գրավիչ:

Համայնքի ռազմավարական նպատակներն են՝

- զարգացնել տեղական ինքնակառավարումը,
- զարգացնել մարդկային կապիտալը,
- ստեղծել նոր որակի քաղաքային միջավայր,
- զարգացնել փոքր ու միջին ձեռնարկությունները:

2.3 Համայնքի զարգացման 2017-2021 թվականների գերակայությունները

Ելնելով համայնքի զարգացման ռազմավարական նպատակներից՝ Գյումրու զարգացման 2017-2021 թվականների հիմնական գերակայություններն են՝

- «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ»-ի վարկային և դրամաշնորհային ծրագրի իրականացումը,
- բնակչության կենսական շահերի ապահովումը, անօթևան ընտանիքներին բնակարաններով ապահովմանը միջոցառումներ օգնություններ տրամադրելու ծրագրերի իրականացումը,
- քաղաքի հեղինակության բրենդավորումը և ներկայացումը,
- տեղական ինքնակառավարման համակարգի որակի և արդյունավետության բարձրացումը,
- համայնքային տնտեսության ենթակառուցվածքների զարգացման ապահովումը,
- համայնքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի էական բարելավումը,
- բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը, այդ նպատակով հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը,
- համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանության ապահովումը, այդ նպատակով սոցիալական ծրագրերի իրագործումը,
- գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը,
- նախադպրոցական կրթական համակարգի շարունակականության ապահովումը,
- համամարդկային և ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը և պատշաճ ներկայացումը,
- առողջ ապրելակերպի խրախուսումը, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

- երիտասարդական ոլորտի մշտական զարգացումը,
- բարեգործության խրախուսում՝ «Գյումրու տարվա մեկենաս» և «Գյումրու պատվավոր մեկենաս» կոչումների շնորհումը
- քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունն ու կիրառումը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների մշակում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3.1 Հանրապետական և մարզային ծրագրեր

ՀՀ կառավարության 2016թ.-ի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ նախատեսվում է իրականացնել

Քաղաքաշինության ոլորտում

Երկրաշարժի հետևանքով աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացումը, 2017 թվականին Գյումրի համայնքում ծրագրի ավարտը:

Քաղաքաշինական ոլորտում թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի ամբողջական գործարկումը:

2017-2021 թվականների ընթացքում հանրապետության բնակավայրերին գլխավոր հատակագծերով ապահովելու խնդրի ամբողջական լուծումը:

Սպորտի և երիտասարդության ոլորտում

Տարածքային համաչափ զարգացման համատեքստում երիտասարդական ծրագրերի էական ավելացում մարզերում, ինչպես նաև երիտասարդության հիմնախնդիրների լուծման գործընթացներում մարզային երիտասարդների ներգրավածության մակարդակի բարձրացում:

Ներդրումների խրախուսման և պաշտպանության նպատակով

Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման աջակցության նպատակով պետության կողմից ներդրումային ֆոնդի ձևավորում՝ հետագայում պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ գործող ֆոնդ ունենալու տեսլականով:

ՀՀ Շիրակի մարզի 2017-2019 թվականների պետական բյուջեների հաշվին Գյումրիում նախատեսված է իրականացնել կապիտալ ծրագրեր (*հավելված 8*):

Վարկային և դրամաշնորհային ծրագրերով նախատեսվում է՝

- Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2017-2019 թթ. իրականացվելու են համայնքի ճանապարհների հիմնանորոգման և համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ:

Ծրագրի հիմնական նպատակն է Գյումրի համայնքում ունենալ անվտանգ երթևեկության կազմակերպման համար բարեկարգ փողոցներ և էներգախնայող արտաքին լուսավորության ցանց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համայնքի ճանապարհների, դրանց հարակից մայթերի կապիտալ վերանորոգում, կահավորում ճանապարհային երթևեկության համար անհրաժեշտ սարքավորումներով և նշաններով, ինչպես նաև փողոցներում արդիականացնել արտաքին լուսավորության ցանցը, մասնավորապես փոխել հենասյուները, նախատեսել նոր մալուխների անցկացում, էներգախնայող լամպերի օգտագործում, ինչպես նաև կառավարման ավտոմատացված համակարգի ներդրում:

Ճանապարհաշինական ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է հիմնովին վերանորոգել քաղաքի 16.075 մետր երկարությամբ, 9-18 մետր լայնությամբ թվով տասը փողոց՝ հարակից մայթերով, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 302.274 քառակուսի մետր, համապատասխանաբար 218.176 քառակուսի մետր փողոց, 84.098 քառակուսի մետր մայթ: Հիմնանորոգված փողոցներում նաև անցկացվելու է 15.185 մետր ջրահեռացման համակարգ: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգման ենթակա փողոցների կահավորում ճանապարհային երթևեկության նշաններով: Նախատեսվում է նաև 20 տարիների շահագործման ընթացքում դրանց 5 %-ի վերանորոգման ծախսեր:

Համայնքի արտաքին լուսավորության համակարգը արդիականացնելու արդյունքում նախատեսվում է տեղադրել 1500 հատ նոր հենասյուն՝ վերանայելով գոյություն ունեցող հենասյուների տեղադրությունը և դրանց հեռավորությունները, վերանորոգել թվով 5400 հենասյուն, քանի որ ներկայումս հնարավոր չէ լուսադիոդային լուսատուների միջոցով մինչև 30 մետր հեռավորության վրա անընդհատ, առանց ստվերի լուսավորություն ապահովել երթևեկի և հետիոտնի համար նախատեսված վայրերում:

Բացի նոր հենասյուներ տեղադրելուց, գոյություն ունեցող հենասյուների վերանորոգումից և դրանց միջև եղած հեռավորությունը վերանայելուց՝ նաև նախատեսվում է լուսադիոդային 11500 լուսատուների տեղադրում՝ ապահովելով արդյունավետ և անվտանգ լուսավորության համակարգ:

Նատրիումային լուսատուների փոխարինումը լուսադիոդային ժամանակակից լուսատուներով թույլ կտա առկա լուսատուների 250 վատ միջին էներգիայի ծախսման փոխարեն ծախսել 70-100 վատ, որն արդեն իսկ շուրջ 2.5-3 անգամ կնվազեցնի էներգածախսատարությունը: Այդ առումով կխնայվի ոչ միայն շահագործման. այլ նաև ընթացիկ սպասարկման ծախսերը՝ հաշվի առնելով, որ սնդիկային հիմքով փողոցային լուսատուները ունեն 1.5, նատրիումային լուսատուները՝ 2-5, իսկ լուսադիոդային լուսատուները՝ շուրջ 10 տարվա միջին կյանքի տևողություն:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է գոյություն ունեցող մալուխային ցանցի փոխարինում նորով (մոտ 700 կիլոմետր երկարությամբ), որի արդյունքում անվտանգության աստիճանը էականորեն կբարձրանա, ինչպես նաև կբարելավվի քաղաքի արտաքին տեսքը, և այն կդառնա ավելի գրավիչ: Այս գործընթացը ոչ միայն կարևորագույն խնդիր է՝ քաղաքի արտաքին տեսքի և անվտանգության նկատառումներից ելնելով, այլ նաև, այդ սկզբունքից ելնելով, կկանոնակարգվի այլ ենթակառուցվածքներ սպասարկող կազմակերպությունների կողմից անցկացրած տարաբնույթ մալուխների խնդիրը:

Արդիականացման ծրագիրն ամբողջական դարձնելու համար, որպես հաջորդ բաղադրիչ, կարևորվում է նաև համայնքի արտաքին լուսավորության ավտոմատ կառավարման կենտրոնի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա առցանց ռեժիմով հետևել լուսատուների հոսանքի բեռին, անջատումներին և այլն:

- Համայնքի ջրամատակարարման աշխատանքներին աջակցում է Գերմանական զարգացման բանկը (KFW), որի կողմից շարունակվելու է իրականացվել համայնքի ջրամատակարարման ստորգետնյա բաշխիչ ցանցի կապիտալ հիմնանորոգման աշխատանքների վարկային ծրագիրը:
- «Արևիկ» նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի հիմնանորոգման և «Նանուլիկ» նախադպրոցական ուսումնական հաստատության նոր շենքի կառուցման աշխատանքները ընդգրկվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրում:

3.2 Միջհամայնքային ծրագրեր

Երևան քաղաքի վարչական շրջանների, ինչպես նաև Վանաձոր համայնքի հետ նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- համագործակցող կողմերի փոխադարձ այցերի կազմակերպում,
- փորձի փոխանակում,
- տեխնիկական, նյութական աջակցության ցուցաբերում,
- մարզամշակութային ծրագրերի ու միջոցառումների իրականացում,
- վարպետության դասընթացների կազմակերպում /ազգային երգ ու պարի, ծեսերի ուսուցում և այլն/:

3.3 Այլ ծրագրեր և միջոցառումներ

- 2017 թվականից նախատեսվում է գործարկել «ՍԱՍՍԵՔՍ» տեքստիլ գործարանը՝ 400 աշխատատեղով:
- 2017 թվականին ավարտվելու է «Ածիկի» գործարանի կառուցումը:
- Նախատեսվում է կարտոֆիլի վերամշակման «FARMFRITES» գործարանի կառուցումը, որը կապահովի նոր աշխատատեղեր ոչ միայն Գյումրի համայնքում, այլև ամբողջ մարզում:
- 2015 թվականից Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից իրականացվելու է «Գյումրի համայնքի հին թատրոնի շենքի և հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման ծրագիր»-ը:

Ծրագրի նպատակն է՝ Գյումրի համայնքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով հին թատրոնի շենքի և հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 960000000 (ինը հարյուր վաթսու միլիոն) դրամ:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

- Երկաթգծի կուլտուրայի տան շինարարական-վերականգնողական աշխատանքների իրականացման ուղղությամբ ձեռք է բերված համաձայնություն Ռուսաստանի Դաշնության «Արաքս» միության հետ: Շին-վերականգնողական աշխատանքները իրականացվելու է «Արաքս» միության ֆինանսական միջոցներով, և աշխատանքների ավարտից հետո շենքը շահագործման է հանձնվելու «Արաքս» միությանը:
- «Առդա» հիմնադրամի և Գյումրի քաղաքապետարանի միջև կնքված հուշագրով սկսվելու է «Սոցիալական բնակարան» ծրագիրը, որը լինելու է շարունակական:
- Վորլդ Վիժն Հայաստանը նախատեսում է Գյումրիում ներդնել 14.000.000 ՀՀ դրամ Գյումրու երիտասարդների կողմից առաջարկվող ծրագրերի իրականացման նպատակով և ակնկալում է Գյումրու համայնքապետարանի կողմից համաֆինանսավորում:
- «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ՝ ՎՎՀ) և «Մուշ Զարգացման կենտրոն»-ի (այսուհետ՝ «Մուշ» ՀԿ) աջակցությամբ իրականացվել է 2 խմբանոց մանկապարտեզի գործունեություն՝ իրեն անհատույց օգտագործման իրավունքով տրված Մուշ-2 թաղամասի թիվ 42 ավագ դպրոցի տարածքում:

Համայնքապետարանը ևս աջակցել է Մուշ-2 թաղամասում գործող միակ մանկապարտեզի գործունեությանը:

Կողմերի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Մուշ-2 թաղամասում գործող միակ մանկապարտեզի գործունեության շարունակականությունն ապահովելու և չորս տարվա ընթացքում այն Գյումրի համայնքի սեփականությանը հանձնելու ուղղությամբ:

Ծրագրի իրականացման նպատակով Գյումրու համայնքապետարանը պարտավորվել է՝

- 2015թ.-ի 4-րդ եռամսյակում Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ համայնքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար եռամսյակի անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 25 տոկոսի չափով,
- 2016թ.-ին Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ համայնքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 50 տոկոսի չափով,
- 2017թ.-ին Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ համայնքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 75 տոկոսի չափով,
- 2018թ.-ից սկսած Մուշ ՀԿ-ին տարեկան հատկացնել դրամաշնորհ՝ համայնքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 100 տոկոսի չափով,
- սկսած 2018թ.-ից ՎՎՀ-ն դադարեցնում է մանկապարտեզի գործունեության համար տրվող իր աջակցությունը Մուշ ՀԿ-ին:
 - Հայ-ամերիկյան «Ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդ» հիմնադրամի կողմից վերանորոգվելու է «Լապտերիկ» նախադպրոցական ուսումնական հաստատության շենքը

- Հաշմանդամություն ունեցող անձանց «Արմինե» կրթամշակութային ՀԿ-ի հետ համագործակցության ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրագործել և «Հավասար իրավունք, հավասար հնարավորություն» խորագիրը կրող տարբեր միջոցառումներ:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

4.1 Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Աղյուսակ 4.1.1
միավորը հազ. դրամ

N	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	3261415.0	3331463.8	3233332.5	3173051.3	3230337.3	3298951.4	3371260.1	3446393.9
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	3130224.3	3183463.8	3154332.5	3080873.3	3128337.3	3187451.4	3249760.1	3315393.9
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	623265.7	640639.8	633710.0	642051.9	668582.0	695513.7	723566.4	752122.4
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	133665.4	136223.3	136250.0	140064.4	143508.8	148007.6	152773.4	155964.2
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	91016.9	90345.4	90450.0	93921.5	96893.9	101010.5	105376.8	108141.0
	Հողի հարկ	42648.5	45877.9	45800.0	46142.9	46614.9	46997.1	47396.6	47823.2
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	358745.7	365218.5	366150.0	367809.7	388774.9	408991.1	429645.2	451771.9
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	358745.7	365218.5	366150.0	367809.7	388774.9	408991.1	429645.2	451771.9

1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	97894.2	105998.0	98510.0	100977.8	103098.3	105314.9	107947.8	111186.3
	Տեղական տուրքեր	97894.2	105998.0	98510.0	100977.8	103098.3	105314.9	107947.8	111186.3
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	32960.4	33200.0	32800.0	33200.0	33200.0	33200.0	33200.0	33200.0
	Պետական տուրքեր	32960.4	33200.0	32800.0	33200.0	33200.0	33200.0	33200.0	33200.0
1.5	Այլ հարկային եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	2037189.8	2043318.5	2043318.5	1974297.3	1977500.0	1989000.0	2001500.0	2015000.0
2	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	2037189.8	2043318.5	2043318.5	1974297.3	1977500.0	1989000.0	2001500.0	2015000.0

ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	1866835.1	1966760.5	1966760.5	1966760.6	1977500.0	1989000.0	2001500.0	2015000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	170354.7	70429.3	70429.3	0.0	0.0	0.0	0.0	0.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0.0	6128.7	6128.7	7536.7	0.0	0.0	0.0	0.0
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	469768.8	499505.5	477304.0	464524.1	482255.3	502937.8	524693.7	548271.6
3.1	Տոկոսներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.2	Շահաբաժիններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	139543.9	151265.3	150500.0	153953.2	165807.9	179160.2	192120.4	206079.8
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	107264.8	119331.6	118450.0	118979.9	128736.3	139678.8	149875.4	160666.4

	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	32279.1	31933.7	32050.0	34973.3	37071.7	39481.4	42245.1	45413.4
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	97162.4	102564.0	102004.0	102204.0	102609.0	103157.1	104554.8	105435.3
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	74901.4	75204.0	75204.0	75204.0	75204.0	75204.0	75204.0	75204.0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	22261.0	27360.0	26800.0	27000.0	27405.0	27953.1	29350.8	30231.3
3.5	Վարչական գանձումներ	222533.9	225676.2	213800.0	194466.9	199338.4	204620.5	210018.5	216256.5
	Տեղական վճարներ	185810.3	189676.2	187700.0	179466.9	182338.4	185620.5	189518.5	194256.5

	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	36723.6	36000.0	26100.0	15000.0	17000.0	19000.0	20500.0	22000.0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	3879.8	12500.0	3500.0	5400.0	6000.0	7500.0	9500.0	12000.0
	Վարչական իրավախախտումների համետ ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	3879.8	12500.0	3500.0	5400.0	6000.0	7500.0	9500.0	12000.0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.9	Այլ եկամուտներ*	6648.8	7500.0	7500.0	8500.0	8500.0	8500.0	8500.0	8500.0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	6648.8	7500.0	7500.0	8500.0	8500.0	8500.0	8500.0	8500.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	131190.7	148000.0	79000.0	92178.0	102000.0	111500.0	121500.0	131000.0

1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	12702.8	44540.0	7000.0	15000.0	17000.0	18500.0	19500.0	21000.0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	12702.8	44540.0	7000.0	15000.0	17000.0	18500.0	19500.0	21000.0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2.	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.	Հարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	118487.9	103460.0	72000.0	77178.0	85000.0	93500.0	102000.0	110000.0
	Հողի իրացումից մուտքեր	118487.9	103460.0	72000.0	77178.0	85000.0	93500.0	102000.0	110000.0
	Ոչ նյութական հարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

*) վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

4.2 Համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր

Աղյուսակ 4.2.1

N	Անվանումը	Չափման միավոր	Քանակը	Օտարումը ըստ տարիների				
				2017	2018	2019	2020	2021
1.	Հողամասեր	հեկտար	7.2	1.5	1.3	1.4	1.6	1.5
2.	Շենք, շինություններ	հատ	20	4	4	4	4	4

Համայնքի սեփականություն հանդիսացող կառույցների ցանկը (հավելված 9):

Գյումրի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի օտարման ենթակա հողամասերը ըստ նպատակային նշանակության

Աղյուսակ 4.2.2

N	Անվանումը	Չափման միավորը	Քանակը
	Հողամասեր (ընդամենը 2017-2021թթ.)	հեկտար	7.5
1.	Բնակելի	հեկտար	3.5
2.	Հասարակական	հեկտար	2.5
3.	Արտադրական	հեկտար	1.2

5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

5.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Հետիոտնի շարժման անվտանգության նկատառումներից ելնելով՝ ստորգետնյա և վերգետնյա անցումների վերանորոգում.
- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի վերականգնում Մհեր Մկրտչյան փողոցի նախագծային և շինարարական աշխատանքների (Նժդեհ փողոցից մինչև Խրիմյան Հայրիկ փողոց) իրականացում.
- Նոր գերեզմանատան տարածքի ձեռք բերման հետ կապված աշխատանքների իրականացում.
- Նախկին Տեքստիլ կոմբինատի տարածքի կառուցապատման լուծումների մշակում.
- «Կոմայրի» արգելոցի սահմանների ճշգրտում, հուշարձանների վերահաշվառում, դասակարգում և անձնագրավորում.
- Համայնքի վարչական տարածքի գոտևորման նախագծի մշակում.
- Սավոյան փողոցի պուրակի վերականգնում, շարքվանի վերաշահագործում.
- Համայնքի գլխավոր հատակագծի գոտևորման նախագծին համապատասխան՝ մշակել քաղաքաշինական կարևոր հանգույցների մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծային առաջարկություններ.
- Ամբողջական կառուցապատման նպատակով առանձնացնել հողամասեր ինչպես հասարակական օբյեկտների շինարարության, այնպես էլ բնակելի տների համալիրների համար.
- Վերանայել զբոսայգիների և պուրակների տարածքների ճարտարապետական լուծումները.
- Մշակել ծրագիր և պետական կառավարման մարմիններին ներկայացնել՝ վթարային վիճակում գրավող կամ խիստ վնասված բարձր արժեք ներկայացնող հուշարձան-շենքերի և շինությունների մասնակի վերանորոգման և պահպանության համար

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

« Գլխավոր հատակագծի և գոտևորման նախագիծ »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – կանոնակարգել կառուցապատման և հողօգտագործման աշխատանքները
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – համայնքի զարգացման քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի ապահովում, հողօգտագործման արդյունավետության բարձրացում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – 35 000 (հազ. դր.)

բ) այլ՝ (հազ. դր.)

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

Աղյուսակ 5.1.1

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Գոտևորման նախագծի մշակում, գլխավոր հատակագծի փոփոխում	35 000	աշխատանքի ծավալ (%)	5	65	15	25		2017	2019

« Սոցիալական բնակարանաշինություն »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

- Ծրագրի նպատակը** – բարելավել համայնքի սոցիալապես առավել խոցելի ընտանիքների կենցաղային պայմանները
- Ծրագրից ակնկալվող արդյունքները** – համայնքի սոցիալապես առավել խոցելի անօթևան ընտանիքներին սոցիալական բնակարաններով ապահովում, համայնքի կիսավարտ շենքերի վերանորոգում
- Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի ժամանակավոր կացարաններում բնակվող հաշմանդամ, ծեր և միայնակ քաղաքացիներ
- Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – 75 000 (հազ. դր.)
 - բ) այլ՝ «Առդա» բարեգործական հիմնադրամ - 425 000 (հազ. դր.)

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

Աղյուսակ 5.1.2

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Սոցիալական բնակարանների կառուցում	500 000	աշխատանքի ծավալ (%)	23	27	20	20	20	2017	2021

« Գյումրի համայնքի հին թատրոնի շենքի վերանորոգում, «Թումո» կենտրոնի ընդլայնում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – նպաստել Գյումրի համայնքում ՏՏ ոլորտի զարգացմանը
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – պատանիների և երիտասարդների ինտեգրում ժամանակակից աշխատաշուկային, նորարարական նախաձեռնությունների խրախուսում, համայնքի պատմամշակութային արժեքների պահպանում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – Գյումրի համայնքի պատանի բնակիչներ և նրանց ծնողներ, ՏՏ ոլորտի մասնագետներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – (հազ. դր.)
 - բ) այլ՝ «Սիմոնյան կրթական» հիմնադրամ - 960 000 (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.1.3

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Հին թատրոնի շենքի վերանորոգում	960 000	աշխատանքի ծավալ (%)	21	34	24	21		2017	2020

« Նախկին երկաթուղայինների մշակույթի պալատի վերակառուցում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – զարգացնել համայնքի մշակութային ենթակառուցվածքները
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – համայնքի մշակութային կյանքի ակտիվացում, մշակույթի զարգացում, պատմամշակութային արժեք ունեցող շենքի վերականգնում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – (հազ. դր.)
 - բ) այլ՝ բարեգործական կառույցներ - 1 200 000 (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.1.4

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Մշակույթի պալատի վերականգնում	1 200 000	աշխատանքի ծավալ (%)	17	25	25	25	8	2017	2021

« Գյումրու 2-րդ և 3-րդ գերեզմանատների տարածքների ընդլայնում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

- Ծրագրի նպատակը** – կանոնակարգել գերեզմանատների շահագործման աշխատանքները
- Ծրագրից ակնկալվող արդյունքները** – գերեզմանատներին հողային ռեսուրսներով ապահովում, գերեզմանատների բարեկարգում
- Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ
- Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – 80 000 (հազ. դր.)
 - բ) այլ՝ (հազ. դր.)
- Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.1.5

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Հողային տարածքների ձեռքբերում և դրանց իրացում	80 000	հա		12	6	6	6	2018	2021

« Պատմամշակութային հուշարձանների վերականգնում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

- Ծրագրի նպատակը** – վերականգնել պատմական միջավայրը
- Ծրագրից ակնկալվող արդյունքները** – պատմամշակութային ժառանգության պահպանում, պատմամշակութային արժեքների ներկայացում, զբոսաշրջության խթանում

3. Ծրագրի հիմնական շահառուները – համայնքի բնակիչներ, զբոսաշրջիկներ
4. Ծրագրի ֆինանսական աղբյուրները
 - ա) համայնքային բյուջե՝ – 20 000 (հազ. դր.)
 - բ) այլ՝ մասնավոր ներդրումներ – 480 000 (հազ. դր.)
5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

Աղյուսակ 5.1.6

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշեր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Պատմամշակութային հուշարձանների վերականգնում	500 000	աշխատանքի ծավալ (%)	20	20	20	20	20	2017	2021

« Ստորգետնյա անցումների վերակառուցում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. Ծրագրի նպատակը – զարգացնել համայնքի ենթակառուցվածքները
2. Ծրագրից ակնկալվող արդյունքները – համայնքի բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում, տրանսպորտային երթևեկության կարգավորում
3. Ծրագրի հիմնական շահառուները – Գյումրի համայնքի բնակիչներ, զբոսաշրջիկներ
4. Ծրագրի ֆինանսական աղբյուրները
 - ա) համայնքային բյուջե՝ – (հազ. դր.)
 - բ) այլ՝ մասնավոր ներդրում – 100 000 (հազ. դր.)
5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

Աղյուսակ 5.1.7

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշեր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Ստորգետնյա անցումների վերակառուցման աշխատանքներ	100 000	աշխատանքի ծավալ (%)	10	20	20	30	20	2017	2021

« Հասարակական զուգարանների կառուցում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – զարգացնել համայնքի սպասարկման ենթակառուցվածքները
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – համայնքի սանիտարական վիճակի բարելավում, հարմարավետ միջավայր, զբոսաշրջության խթանում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – (հազ. դր.)
 - բ) այլ՝ մասնավոր ներդրում – 40 000 (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.1.8

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշեր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Հասարակական զուգարանների կառուցում	40 000	հատ		1	2	1		2018	2020

5.2 Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

- Գյումրու փողոցային երթևեկության սխեմայի վերանայում, մշակում, քննարկում և հաստատում,
- Համայնքի փողոցների կանաչ գոտիների և այլ համայնքապարկային կառույցների գույքագրում և քարտեզագրում,
- Համայնքի փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար տարբեր մակնիշների (ծյուն մաքրող, բարձող, մայթ մաքրող, ինքնաթափ, գրեյդեր) և այլ հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ձեռքբերում,
- Համայնքային աղբավայրի ճանապարհի մշտական մաքրում և հարթեցում,
- Աղբավայր մտնող մեքենաների նկատմամբ վերահսկողության իրականացում, դրանց հաշվառում,

- Փողոցների երթևեկությունը կարգավորելու նպատակով նոր, ժամանակակից վայրկենացուցիչով լուսացուցիչների տեղադրում, երթևեկությունը կարգավորող նշանների թարմացում և ավելացում, փողոցների գծանշումների վերականգնում և թարմացում,
- Համայնքի տարածքում գտնվող թաղային նշանակության փողոցների բարեկարգում,
- Համայնքի արտաքին լուսավորության ցանցի կարգավորում, բարելավում, արդիականացում,
- Բազմաբնակարան շենքերի սպասարկող համատիրությունների հետ կապի ամրապնդում, նրանց աշխատանքների կանոնակարգման և համակարգման նպատակով միջոցառումների կազմակերպում,
- Համայնքային թիվ 3 գերեզմանատան տարածքի ընդլայնում: Գերեզմանոցների տարածքների բարեկարգում, ճանապարհների կառուցում,
- Համայնքում կանաչ գոտիների ընդլայնում. 2017- 21 թթ. նախատեսվում է Գյումրի համայնքում ևս 5 հա կանաչ տարածքների հիմնում, նոր ծառերի տնկում, գազոնների մշակում, ծաղկապատում, թփապատում,
- Կանաչ գոտիներում ոռոգման ցանցերի վերականգնում, կառուցում,
- Կոմունալ համակարգի աշխատանքների բարելավման նպատակով համայնքապետարանի աշխատակազմին պատկանող ավտոպարկի ստեղծում,
- Համայնքապետարանի աշխատակազմին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների հիմնական վերանորոգում, փաստաթղթային տնտեսության կարգավորում,
- Գյումրու այգի-պուրակային գոտիները, նաև Ախուրյան գետի ափամերձ հատվածը և Չերքեզի ձորի տարածքը, քաղաքային հանգստի և ժամանցի բարեկիրթ, կանաչապատ և առավել օգտագործելի դարձնելու հետևողական ծրագրի իրականացում,
- Տարածքների բարեկարգում՝ դրանք՝ ներդրում կատարելու պատրաստ կազմակերպություններին կամ ընտանիքներին օգտագործման տրամադրելու ձևով՝ մշտական հսկողության և խրախուսման ձևերի կիրառմամբ,
- Գետակների հարակից տարածքներում թափոններից մաքրման աշխատանքների կազմակերպում և համակարգում,
- Ափամերձ տարածքներում սանիտարական մաքրման՝ աղբակույտների վերացման և աղբահանության աշխատանքների կազմակերպում,
- Քաղաքի տարածքում առկա շինարարական և կենցաղային աղբի չվերահսկվող կուտակումների վերացում,
- Աղբամանների քանակի և աղբամանների շրջակայքում դեռափոխազդի աշխատանքների հաճախականության ավելացում,
- Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում,
- Իրականացնել բնակիչների իրազեկության բարձրացման միջոցառումներ ու ծրագրեր, այդ թվում՝ գովազդային վահանակների փակցում քաղաքի տարբեր վայրերում, սոցիալական գովազդների նկարահանում ու հեռարձակում տեղական հեռուստաընկերություններով և այլ հնարավոր միջոցներով,
- Ոլորտային փորձագետների, տնտեսագետների ներգրավմամբ իրականացնել քաղաքի բոլոր գետակների մաքրման աշխատանքների համար պահանջվող անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ և շահագրգիռ կողմերի ներգրավմամբ մշակել

«Գյումրու գեղականների մաքրման ռազմավարություն» և ծրագիր առաջարկ-պահանջով դիմել ՀՀ կառավարությանը և այլ աղբյուրների,

- աղբահանության ծառայության կազմակերպման գործում Հայաստանում և արտերկրում կիրառվող լավագույն փորձի կիրառման մոդելի մշակում,
- Համայնքի բարեկարգման աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած համայնքի բնակիչներին խրախուսում,
- Քաղաքապետարանի քաղաքացիական պաշտպանության կազմակերպման պլանի կազմում,
- Գյումրի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի կազմում,
- Ուժեղ երկրաշարժերի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանի կազմում,
- Համայնքի ամենամյա գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերահսկման միջոցառումների պլանի կազմում:

ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

« Փողոցների բարեկարգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

Փողոցաշինության ծրագիրը կազմվել է՝ ելնելով հետևյալ առաջնահերթություններից՝

- դեպի մանկապարտեզ տանող ճանապարհ,
- դեպի դպրոց տանող ճանապարհ,
- դեպի բուժհաստատություն տանող ճանապարհ,
- գլխավոր փողոցներին շրջանցիկ ճանապարհ,
- գլխավոր փողոցները հատող երկրորդական փողոցներ:

1. **Ծրագրի նպատակը** – ստեղծել նոր որակի քաղաքային միջավայր
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովում, զբոսաշրջության գրավչության ավելացում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ - 1 267 000 (հազ. դր.)
 - բ) այլ (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.2.1

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշեր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Մադոյան փողոց (Թումանյան փողոցից Գորկի փողոց)	43 200	կմ	0.43					2017	2017
2.	Մադոյան փողոց (Գորկի փողոցից ՀԷՑ)	27 000	կմ	0.24					2017	2017
3.	Ղանդիլյան 1-ին նրբանցք (Ղուկասյան փողոցից Ղանդիլյան փողոց)	44 000	կմ		0.43				2018	2018
4.	Ղուկասյան փողոց (Գորկի փողոցից Ռուսթավելի փողոց)	14 800	կմ	0.18					2017	2017
5.	Պուշկինի փողոց (Հաղթանակի պողոտայից Մուսայելյան փողոց)	89 000	կմ		0.71				2018	2018
6.	Նեկրասովի փողոց (Սյրեփանյան փողոցից Երևանյան խճուղի)	37 000	կմ		0.29				2018	2018
7.	Իսահակյան փողոց (Ա. Մանուկյան փողոցից Մ. Մկրտչյան փողոց)	24 000	կմ		0.21				2018	2018
8.	Աբովյան փողոց (Ա. Մանուկյան փողոցից Մ. Մկրտչյան փողոց)	61 000	կմ		0.6				2018	2018
9.	Ղորղանյան փողոց (Գորկի փողոցից Ռուսթավելի փողոց)	17 000	կմ		0.16				2018	2018
10.	Շարա-Տալյան փողոցի միջնամաս	52 000	կմ		0.41				2018	2018
11.	Մադոյան փողոց (Տիգրան Մեծ փողոցից Սպարտակի փողոց)	31 000	կմ			0.28			2019	2019
12.	Սարգսյան փողոց (Շիրակացի փողոցից Չերքեզի ծոր)	39 000	կմ			0.35			2019	2019
13.	Թումանյան փողոց (Հաղթանակի պողոտայից Մուսայելյան փողոց)	77 000	կմ			0.64			2019	2019
14.	Մյասնիկյան փողոց (Տերյան փողոցից Գորկի փողոց)	75 000	կմ			0.67			2019	2019
15.	Հակոբյան փողոց (Գորկի փողոցից Ռուսթավելի փողոց)	17 000	կմ			0.15			2019	2019

16.	Այվազովսկու փողոց (Շչերբինա փողոցից Վ. Սարգսյան փողոց)	31 000	կմ			0.24			2019	2019
17.	Հ. Մելքոնյան փողոց (Շիրակացի փողոցից մինչև զինատ)	42 000	կմ				0.35		2020	2020
18.	Մյասնիկյան փողոց (Ռուսթավելի փողոցից մինչև հին ծննդատուն)	44 000	կմ				0.35		2020	2020
19.	Շինարարների փողոց (Կոշտրյան փողոցից Ռ. Դանիելյան փողոց)	86 000	կմ				0.55		2020	2020
20.	Զիվանու փողոց (Տերյան փողոցից մինչև փակուղի)	30 000	կմ				0.27		2020	2020
21.	Տիմիրյազև փողոց (Շչերբինա փողոցից Վ. Սարգսյան փողոց)	64 000	կմ				0.48		2020	2020
22.	Անի թաղամաս 11-րդ փողոց (Պ. Սևակ փողոցից Կարմիր Խաչի շենքեր)	53 000	կմ					0.7	2021	2021
23.	Անի թաղամաս Ա. Խաչատրյան փողոց (Մ. Խորենացի փողոցից մինչև վերջ)	82 000	կմ					1.1	2021	2021
24.	Անի թաղամաս 5-րդ փողոց (Մ. Ավետիսյան փողոցից Տ. Ճարտարապետ փողոց)	70 000	կմ					0.96	2021	2021
25.	Թամանյան փողոց (Զայկովսկի փողոցից Ռեպին փողոց)	27 000	կմ					0.18	2021	2021
26.	Տեքստիլագործների փողոց (Մ. Մկրտչյանի փողոցից Ն. Շնորհալու փողոց)	30 000	կմ					0.2	2021	2021
27.	Կուզնեցովի փողոց (Թեպչերի փողոցից Պավլովի փողոց)	60 000	կմ					0.37	2021	2021

« Կանաչ տարածքների պահպանում և ավելացում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – բարելավել բնապահպանական միջավայրը
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – հանգստի գոտիների ապահովում, օդի աղտոտվածության նվազեցում, թթվածնի քանակի ավելացում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

ա) համայնքային բյուջե՝ – 15 500 (հազ. դր.)

բ) այլ (հազ. դր.)

5. Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր

Աղյուսակ 5.2.2

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշեր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Ծառատունկ	15 500	հատ	3500	4000	4450	4850	5300	2017	2021

5.3 Բնակտնտեսություն և համատիրություններ

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

- Շենքերի վերանորոգման աշխատանքներին համատիրություններին աջակցություն.
- Բակային տարածքների բարեկարգում.
- Խաղահրապարակների տեղադրում.
- Համատիրությունների կառավարման և ֆինանսական գործունեության վերաբերյալ մեթոդական օգնության կազմակերպում.
- Համատիրությունների գործունեությանը բնակիչների մասնակցության ակտիվացմանը միտված միջոցառումների կազմակերպում.
- Համատիրությունների թափանցիկ գործունեության հաշվետվողականության ապահովում.
- Համատիրությունների կառավարման լավագույն փորձի ծրագրերի մշակում.
- Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման ծրագրերի մշակում և իրականացում.
- Ժամանակավոր կացարանների ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում:

ԲՆԱԿՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

« Բազմաբնակարան շենքերի կտուրների վերանորոգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – բարելավել բնակարանային տնտեսության վիճակը
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – շենքերի անվտանգության աստիճանի բարձրացում և շահագործման ժամկետի երկարացում, համատիրությունների կայացում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի թվով 150 բազմաբնակարան շենքերի բնակիչներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – 100 000 (հազ. դր.)
 - բ) այլ՝ համատիրություններ – 50 000 (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.3.1

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1	Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	150 000	քանակ	30	30	30	30	30	2017	2021

« Խաղաղապարակների հիմնում և բակերի բարեկարգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – ստեղծել երեխաների համար զարգացման միջավայր
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – առողջ ապրելակերպի խրախուսում, երեխաների ներդաշնակ զարգացում, բակերի բարեկարգում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի 3-ից 12 տարեկան երեխաները
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ – 20 000 (հազ. դր.)
 - բ) այլ (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.3.2

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		

1	Խաղահրապարակների հիմնում	20 000	քանակ	4	4	4	4	4	2017	2021
---	--------------------------	--------	-------	---	---	---	---	---	------	------

5.4 Տրանսպորտ

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

- Միջին տեղադրարողության նոր միկրոավտոբուսներով հագեցած միկրոավտոբուսային երթուղիների կազմակերպում.
- Համայնքում կանգառների թվի ավելացում և բարեկարգում.
- Նոր երթուղային ցանցի հաստատում.
- Ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման մրցույթների կազմակերպում և անցկացում.
- Երթուղիները սպասարկող կազմակերպությունների որակի բարձրացում.
- Ավտոկայանատեղերի կանոնակարգման միջոցառումների իրականացում.
- Կանգառներում երթուղային ցուցանակների տեղադրում.
- Հասարակական տրանսպորտում հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման մակարդակի բարելավում:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

« Երթուղային կանգառների և կանգառներում ցուցանակների տեղադրում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** –բարելավել հասարակական տրանսպորտի սպասարկման վիճակը
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – հասարակական տրանսպորտի կանոնակարգված աշխատանք, տրանսպորտից օգտվելու հարմարավետ պայմաններ
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – համայնքի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) համայնքային բյուջե՝ - (հազ. դր.)
 - բ) այլ՝ «Սէյֆ Հոլդինգ» ՍՊԸ – 61 200 (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշներ	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
				2017	2018	2019	2020	2021		
1.	Երթուղային կանգառների տեղադրում	60 000	հատ	10	10	10	10	10	2017	2021
2.	Երթուղային կանգառներում ցուցանակների տեղադրում	1 200	հատ	10	10	10	10	10	2017	2021

5.5 Գովազդ, առևտուր և սպասարկում

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

- Քաղաքում տեղադրված արտաքին գովազդի գույքագրում և չափագրում.
- Գանձման գործընթացի վերահսկում.
- Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժում.
- Գովազդային նյութերի բովանդակության վերահսկում.
- Գյումրի քաղաքում տեղեկատվական ուղեցույցների տեղադրում՝ փողոցների անվանումների ցուցանակների, շենքերի համարակալում.
- Քաղաքի մուտքերը խորհրդանշող գովազդային նյութերի տեղադրում:

5.6 Կրթություն

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ՝

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգում.
- Տնակային պայմաններում գործող հաստատությունների շենքերի կառուցման համար դոնոր կազմակերպություններին ծրագրերի ներկայացում.
- Հաստատություններում ջեռուցման համակարգերի անցկացում.
- Հաստատությունների գույքի թարմացում.
- Մուշ-2 թաղամասում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» կազմակերպության մանկապարտեզի՝ համայնքին անցման գործընթացի

շարունակականության ապահովում.

- Մանկապարտեզների բակերի բարեկարգում և խաղահրապարակների թարմացում.
- Նախադպրոցական կրթական և ուսումնամեթոդական գրականության թարմացում.
- «Մուշ Զարգացման կենտրոն»-ի մանկապարտեզի համայնքին անցման շարունակականության ապահովում.
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակների վերանայում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

« Մանկապարտեզների շենքերի կառուցում և հիմնանորոգում »

(Ոլորտային կապիտալ ծրագրի անվանում)

1. **Ծրագրի նպատակը** – ապահովել մանկապարտեզ հաճախող երեխաների համար գրավիչ և զարգացնող միջավայր
2. **Ծրագրից ակնկալվող արդյունքները** – մանկապարտեզ հաճախող երեխաների թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետության բարձրացում, անվտանգության պայմանների բարելավում
3. **Ծրագրի հիմնական շահառուները** – «Արևիկ», «Նանուլիկ», և «Լապտերիկ» մանկապարտեզներ հաճախող մոտ 350 երեխաներ և երեխաների ծնողներ
4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**
 - ա) **համայնքային բյուջե՝** - 19 982 (հազ. դր.) համայնքի կողմից ներդրվել է 2016 թվականին, 14 818 (հազ. դր.) 2017 թ.-ին
 - բ) **այլ՝** «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» -287 018 (հազ. դր.)
 - 1. «Ծնողագուրկ և հաշմանդամ երեխաների Սուրբ Ծնունդ» հիմնադրամ – 30 000 (հազ. դր.)
5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ 5.6.1

N	Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ	Բաղադրիչի մոտավոր արժեք (հազ. դր.)	Ցուցանիշեր	Թիրախային արժեքներ					Սկիզբ	Ավարտ
